KONRAD ADENAUER STIFTUNG

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ

Սերգեյ Մինասյան

KAS քաղաքականության փաստաթուղթ
Բրյուսել – Երևան, Հոկտեմբեր, 2026թ.



ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

2020թ. ի վեր Հայաստանի ռազմական և անվտանգային կերպափոխումը հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում փոքր պետության անվտանգային քաղաքականության ամենաէական վերակողմնորոշումներից մեկն է: Այս գործընթացը պետք է դիտարկել արագորեն ընդլայնվող եվրոպական չափման համատեքստում, որը սույն փաստաթուղթը սահմանում է լայն ընդգրկումով՝ ներառելով Եվրոպական Միության սեփական գործիքակազմը, ՆԱՏՕ-ն և անդամ պետությունները, ինչպես նաև այս երկու կազմակերպությունների միջև փոխգործակցության ընդլայնվող տարածությունը:

Ներպետական մակարդակում սույն փաստաթուղթը արձանագրում է իրական, սակայն անհավասարաչափ կերպափոխում. 2021-2025թթ. պաշտպանության ծախսերը կտրուկ աճել են, իսկ գնումները բազմազանվել՝ ներառելով Ֆրանսիան, Հնդկաստանը, այլ երկրներ ու ներպետական աղբյուրներ: Միևնույն ժամանակ, շարունակում են գոյություն ունենալ իրականացման բացեր օրենսդրության, ոչ մարտական պայմաններում մաների և ռազմական դոկտրինի ու կառուցակարգային մշակույթի՝ նոր սարքակազմի հետևից հասնելու արագության մեջ:

Եվրոպական շավղով սույն փաստաթուղթն արձանագրում է ԵՄ ներգրավման աննախադեպ չորսամյա ընդլայնում՝ սահմանային դիտորդական ՀԵՄԱ (EUMA) առաքելությունից, նոր՝ հիբրիդային դիմակայունության ՀԵՄԳԱ (EUPMA) առաքելության միջով մինչև Խաղաղության եվրոպական հիմնադրամի (European Peace Facility) օժանդակությունը: Զուգահեռաբար՝ առարկայորեն խորացել են տեխնիկական մակարդակում ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները, որոնք, սակայն, շարունակում են հարկադրաբար կառուցվածքայնորեն սահմանափակվել Թուրքիայի դերակատարմամբ և դեռևս փխրուն Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացով: Ֆրանսիան առաջ է եկել որպես պաշտպանության ոլորտում եվրոպական երկկողմ համագործակցության Հայաստանի խարսխային գործընկեր՝ փոխլրացվելով Հունաստանի, Կիպրոսի, Գերմանիայի, Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների կողմից:

Հիմնվելով Ուկրաինային աջակցելու ԵՄ փորձառության և ժամանակակից պատերազմավարման փոփոխվող բնույթի վրա՝ սույն փաստաթուղթը հայտածում է ռազմավարական, օպերատիվ և տեղեկատվական-իմացական շերտերով կառուցվածքավորված «3D» հայեցակարգային շրջանակ՝ «Զսպում, Պաշտպանություն, Զարգացում» (“Deterrence, Defence, and Development”): Փաստաթուղթը նաև ի հայտ է բերում Հայաստանի սեփական զսպման և դիմակայունության ճարտարապետության համար փոխանցելի ԵՄ և բալթյան/սկանդինավյան կոնկրետ մոդելները, այդ թվում՝ հետախուզական ծառայությունների բարեփոխման զգայուն ոլորտում:

Փաստաթղթի հիմնական թեզն այն է, որ Հայաստանի եվրոպական ինտեգրման օրակարգը և արժանահավատ զսպման ու կայուն դիմակայունության ապահովման երկրի ձգտումը ոչ թե զուգահեռ շավիղներ են, այլ մեկ միասնական և փոխամրապնդող նախագիծ: Հետևաբար, փաստաթուղթն ավարտվում է Հայաստանի որոշում կայացնողների, ԵՄ կառույցների, ՆԱՏՕ-ի և երկկողմ գործընկերների համար կոնկրետ և հասցեական առաջարկություններով:

Միևնույն ժամանակ, Հայաստանի ռազմական և անվտանգային կերպափոխումն ավելի լայն ռազմավարական նշանակություն ունի նաև Հարավային Կովկասում և հարակից տարածաշրջաններում բուն եվրոպական պետությունների ու կառույցների դիրքավորման և քաղաքական նպատակների տեսանկյունից: Այս նշանակությունն առավել ցայտուն է դառնում տարածաշրջանային և ավելի լայն՝ եվրոպական անվտանգության միջավայրը ձևավորող անվտանգության սպառնալիքների և ուժգնացող ռազմավարական մրցակցության ընդլայնվող շրջանակում:

Ներածություն

2020թ. ի վեր Հայաստանի ռազմական և անվտանգային կերպափոխումը չի կարող մեկուսացված ըմբռնվել եվրոպական անվտանգության ավելի լայն միջավայրից, որում այն մասամբ ծավալվում է: Սույն փաստաթղթի վերնագրում հիշատակված Եվրոպական չափում հասկացությունը միտումնավոր ավելի ընդգրկուն է, քան Եվրոպական միությունը՝ որպես ինստիտուտ: Այն ներառում է ոչ միայն ԵՄ-ի սեփական անվտանգության և պաշտպանության գործիքարանը և նրա առանցքային անդամ պետությունների մոտեցումները, այլև ամբողջությամբ վերցված եվրաատլանտյան ճարտարապետությունը՝ՆԱՏՕ-ն, դրա առանձին անդամ պետությունները և երկու կազմակերպությունների միջև բարդացող հարաբերությունները, երբ ԵՄ-ն պաշտպանության ոլորտում հետամտում է ռազմավարական ինքնավարության, իսկ ներկայիս ԱՄՆ վարչակազմի ներքո ավելի է ուժգնանում անդրատլանտյան բեռի բաշխման շուրջ բանավեճը: Հայաստանի նման փոքր պետության համար, որն ունի չափազանց բարդ տարածաշրջանային անվտանգության միջավայր, սրանք վերացական ինստիտուցիոնալ խտրություններ չեն. դրանք պայմանավորում են, թե ինչ գործիքներ են հասանելի, ինչ քաղաքական պայմաններով և ինչ սահմանափակումներով:

Այս միջավայրի հետևյալ երեք կարևոր առանձնահատկությունները պայմանավորում են ստորև ներկայացվող ամբողջ վերլուծությունը: Առաջին՝ ԵՄ-ՆԱՏՕ հարաբերությունները, որոնք պատմականորեն ներկայացվել են որպես փոխլրացնող, ներկայիս փուլում գործնականում դարձել են ավելի վիճարկվող: Պաշտպանության ինքնավար կարողություններ ձևավորելու եվրոպական ջանքերն անհարմար կերպով են գոյակցում ՆԱՏՕ-ի ինտեգրված հրամանատարական կառույցներից և Միացյալ Նահանգներից՝ որպես Դաշինքի հիմնական ռազմական ուժից, շարունակվող կախվածության հետ:

Երկրորդ՝ ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամակցությունը և պաշտոնական Անկարայի ռազմավարական գործընկերությունն Ադրբեջանի հետ շարունակում են սահմանափակել որպես Հայաստանի անվտանգության երաշխավոր հանդես գալու՝ Դաշինքի պատրաստակամության կամ ունակության աստիճանը: Եվ սա՝ նույնիսկ այն դեպքում, երբ Հայաստան-ՆԱՏՕ երկկողմ համագործակցությունը առարկայորեն խորանում է տեխնիկական և կառուցակարգային մակարդակներում: Սա

կառուցվածքային սահմանափակում է և մեծապես պարզաբանում է պաշտպանության ոլորտում ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի առանձին անդամ պետությունների հետ արագորեն ընդլայնվող երկկողմ կապերի և շատ ավելի զգուշավոր տեմպերով ՆԱՏՕ-ի ինստիտուցիոնալ ներգրավվածության միջև առկա անհամաչափությունը:

Երրորդ՝ Թուրքիայից անդին ՆԱՏՕ-ի մի շարք անդամ երկրներ, ինչպես նաև սեփական տարածաշրջանային նրբախնդրություններն ունեցող եվրոպական պետություններ Հայաստանի նկատմամբ իրենց աջակցությունը տրամաչափում են Հայաստան-Ադրբեջան խաղաղության հաստատման փխրուն գործընթացի խորապատկերում՝ զգուշանալով այնպիսի քայլերից, որոնք պաշտոնական Բաքվում, Անկարայում կամ նույնիսկ Մոսկվայում կարող են ընկալվել ոչ թե որպես կայունացնող, այլ ապակայունացնող:

Այս համատեքստում սույն փաստաթուղթը կառուցված է հետևյալ կերպ. Գլուխ 1-ում ուսումնասիրվում է 2020 թ.-ից ի վեր Հայաստանի ռազմական և անվտանգության ոլորտների կերպափոխման մղումներն ու ընդհանուր բովանդակությունը՝ գնումները, դոկտրինը, կրթությունը, հետախուզությունը, իրավապահությունը և ռազմավարական համադասումը: Գլուխ 2-ում վերլուծվում է Հայաստանի համար Եվրոպական Միության շեշտակի ընդլայնված անվտանգային գործիքակազմը՝ սկսած Հայաստանում սահմանների մշտադիտարկման ԵՄ առաքելությունից (ՀԵՄԱ - EUMA) և Հայաստանում հիբրիդային դիմակայունության ԵՄ գործընկերության նոր առաքելությունից (ՀԵՄԳԱ - EUPMA), ընդհուպ մինչև Խաղաղության եվրոպական հիմնադրամը (European Peace Facility): Գլուխ 3-ում անդրադարձ է կատարվում ՆԱՏՕ-ին՝ քննելով Դաշինքի՝ Հայաստանի հետ զգուշավոր, բայց արագացող ներգրավվածությունը և գնահատելով անդամակցության շեմը չհատող հարաբերությունների զարգացման իրատեսական սցենարները: Գլուխ 4-ում հետազոտվում են Հայաստանի երկկողմ ռազմական և անվտանգային գործընկերությունները ԵՄ/ՆԱՏՕ անդամ պետությունների հետ, որտեղ Ֆրանսիան հանդես է գալիս որպես խարսխային գործընկեր, մինչդեռ Հունաստանը, Կիպրոսը, Գերմանիան, Միացյալ Թագավորությունը և Միացյալ Նահանգները գնալով ավելի մեծ դեր են ստանձնում բազմակողմ ձևաչափերում բացակայող գործնական աշխատանքում: Գլուխ 5-ում,

հենվելով Ուկրաինայի զսպման և դիմակայունությանն աջակցելու ԵՄ փորձի, ինչպես նաև ժամանակակից պատերազմավարման՝ ավելի լայն իմաստով փոփոխվող բնույթի վրա՝ ուրվագծվում են այն տարրերը, որոնք կարող են անմիջականորեն կիրառվել Հայաստանի զսպման և դիմակայունության ճարտարապետությունը ձևավորելիս: Վերջին գլխում համախմբվում են փաստաթղթի առաջարկությունները՝ ուղղված Հայաստանում որոշում կայացնողներին, ԵՄ կառույցներին, ՆԱՏՕ-ին և երկկողմ գործընկերներին:

Սույն փաստաթղթի հիմնական նպատակն է հստակորեն բացահայտել այն փոխադարձ կապը, որն առկա է, մի կողմից՝ Հայաստանի եվրոպական ինտեգրման օրակարգի և մյուս կողմից՝ արժանահավատ ու արդյունավետ ռազմական և անվտանգային զսպման, կայուն դիմակայունության կարողությունների ձևավորման նրա փնտրտուքների միջև: Քաղաքականության վերաբերյալ եվրոպական և հայկական քննարկումներում այս երկու գործընթացները միմյանցից անջատ և որպես զուգահեռ շավիղներ դիտարկելու հաստատված մոտեցմանը հակառակ՝ սույն փաստաթղթի համաձայն դրանք հանդիսանում են մեկ միասնական և փոխամրապնդող գործընթաց:

Միևնույն ժամանակ, Հայաստանի ռազմական և անվտանգային կերպափոխումն ունի ավելի լայն ռազմավարական նշանակություն եվրոպական պետությունների ու կառույցների համար, որոնք Հարավային Կովկասում և հարակից տարածաշրջաններում ձգտում են ամրապնդել իրենց դիրքավորումը և հետամուտ են երկարաժամկետ քաղաքական նպատակների:

1. Հայաստանի ռազմական և անվտանգային ոլորտ. արդի շարժընթացներ և կերպափոխում

1.1. Հայաստանի անվտանգային նոր իրողությունները

2020-2023թթ. Լեռնային Ղարաբաղի շուրջ կայունության խորտակումը, որը գագաթնակետին հասավ միջազգայնորեն ճանաչված Հայաստանի տարածք ադրբեջանական ներխուժումներով, դարձավ Հայաստանի հետանկախության շրջանի անվտանգային

քաղաքականության որոշիչ բեկումնային կետը: Այն բացառիկ հստակությամբ քողազերծեց պաշտպանական քաղաքականության մեջ երեք տասնամյակ շարունակ կատարված ընտրությունների կուտակային հետևանքները: Դրանք են՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՍՌՏ) և դոկտրինի հարցերում Ռուսաստանից գրեթե լրիվ կախվածությունը, չբարեփոխված խորհրդային ժառանգության ռազմական կառույցն ու հայեցակետերը, ինչպես նաև Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ)՝ որպես անվտանգության բազմակողմ դերակատարի չափից դուրս ռազմավարական ապավինումը:

Հայաստանի քաղաքական վերնախավի գնահատմամբ և հայկական հասարակության լայն հատվածների ընկալմամբ՝ Ռուսաստանը երկկողմ հիմունքներով ձախողեց Հայաստանի նկատմամբ իր անվտանգային պարտավորությունների կատարումը: Այս կարծիքը, սակայն, կարիք ունի կարևոր վերապահման. Ռուսաստանը բուն Լեռնային Ղարաբաղի նկատմամբ չուներ որևէ պաշտոնական պայմանագրային պարտավորություն: Այնուամենայնիվ, 1990-ականներից ի վեր հայ-ռուսաստանյան ռազմավարական համագործակցության ավելի լայն տրամաբանությունը հիմնված էր այն նախադրյալի վրա, որ պաշտոնական Մոսկվան կաջակցի Հայաստանին՝ պահպանելու երկրամասի նկատմամբ վերահսկողությունը: Ռուսաստանի հրաժարումը Հայաստանին աջակցելուց նրա ինքնիշխան, միջազգայնորեն ճանաչված տարածք 2021-2022թթ. ադրբեջանական ներխուժումների ընթացքում նշանակում է մեկ այլ և ավելի հստակ արտահայտված ձախողում. այն հակասում էր անմիջականորեն ամրագրված և փաստաթղթավորված երկկողմ պարտավորություններին, այլ ոչ թե ենթադրյալ ռազմավարական փոխըմբռնմանը:

Հիշատակված երկրորդ ձախողումն ունի կառուցակարգային բնույթ: ՀԱՊԿ-ի բազմակողմ շրջանակը, որը պաշտոնապես նախատեսված էր հենց նման արտակարգ հանգամանքների համար, հրաժարվեց որևէ իմաստալից արձագանք ցուցաբերել ի պատասխան Հայաստանի դիմումի: Արդյունքում՝ 2024թ. փետրվարի 23-ին Հայաստանը սառեցրեց իր մասնակցությունը ՀԱՊԿ-ին: Փետրվարի 28-ին Ազգային ժողովում ելույթ ունենալիս՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՀԱՊԿ-ը բնորոշեց որպես

«սպառնալիք Հայաստանի ազգային անվտանգությանը»:[1]

Հատուկ հիշատակման է արժանի ևս մեկ կառուցվածքային մարտահրավեր, որը հաճախ թերագնահատվում է մինչ 2020թ. ձախողման վերլուծություններում: **1994թ. առաջին ղարաբաղյան պատերազմում Ադրբեջանի նկատմամբ համոզիչ հաղթանակը տարիմաստորեն կործանարար երկարաժամկետ ազդեցություն ունեցավ Հայաստանի ռազմաշինարարության վրա:** Ինչպես հաճախ տեղի է ունենում տպավորիչ ռազմական հաղթատոներից հետո, ռազմական վետերանների կորպուսը առաջատար դիրքեր գրավեց տնտեսության, քաղաքականության և հանրային կառավարման ոլորտներում՝ ձևավորելով ռազմական-քաղաքական վերնախավ: Այդ վերնախավը կառուցվածքային առումով պատրաստ չէր իրականացնել երկարաժամկետ ռազմավարական մրցակցության համար անհրաժեշտ միջոցառումներ՝ հիմնավոր ռազմական բարեփոխումներ, անձնակազմի փոփոխություններ և տեխնիկական արդիականացում, քանի որ դրանք սպառնում էին իշխանության նկատմամբ նրանց վերահսկողությանը: Ներքին քաղաքականությունից զատ, Հայաստանի պաշտպանության համակարգի բարեփոխումները խոչընդոտելուն նպաստեցին նաև մշակութային, կառուցակարգային և հասարակական (բոլորը՝ ներքին), ինչպես նաև աշխարհաքաղաքական գործոնները (արտաքին), սակայն դրանց քննարկումը դուրս է սույն վերլուծության շրջանակներից: Ներկայիս ռազմական և անվտանգային բարեփոխումներն իրենցից մասնակիորեն ներկայացնում են այս ժառանգած կառուցակարգային ախտավիճակի հաղթահարման փորձ:

Եվրոպացի ընթերցողների համար նման սոցիալական և ռազմական երևույթի ռազմավարական ու պատմական տրամաբանությունը կարող է ավելի հասկանալի դառնալ՝ հստակ զուգահեռներ անցկացնելով 1940թ. մայիս-հունիս ամիսներին Ֆրանսիայի պարտության ակունքների հետ: Ինչպես գրում է ֆրանսիացի անվանի պատմաբան Մարկ Բլոշն իր

[1] RFE/RL, “Pashinyan Says CSTO Is Threat to Armenia’s Security,” 28 February 2024. Available at: https://www.rferl.org/a/armenia-pashinian-csto-frozen/32832200.html

հիմնարար՝ «Տարօրինակ պարտություն» աշխատության մեջ (L'Étrange Défaite, գրվել է Ֆրանսիայի անկումից անմիջապես հետո), Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակից հետո ֆրանսիական բանակը լայնորեն ճանաչված էր որպես Եվրոպայի ամենահզոր ռազմական ուժերից մեկը: Սակայն ընդամենը մի քանի շաբաթվա ընթացքում այն աղետալի պարտություն կրեց գերմանական բանակից, որն իր վճռորոշ առավելությունը ցուցադրեց ոչ միայն պարզապես տեխնոլոգիական մակարդակում, այլև օպերատիվ մտածողության, դոկտրինի, ղեկավարման ու կառավարման, ինչպես նաև ժամանակակից պատերազմի տեմպը արդյունավետորեն օգտագործելու կարողության առումով:[2]

Բլոշի հիմնական ներըմբռնումն այսօր էլ շարունակում է խիստ այժմեական լինել. ռազմական պարտությունը պարտադիր չէ, որ պայմանավորված լինի սպառազինության քանակական կամ որակական անբավարարությամբ: Փոխարենը, այն կարող է բխել սեփական ռեսուրսների արդյունավետ մոբիլիզացումը պետության և հասարակության կողմից ձախողելուց, ինչպես նաև պատերազմի փոփոխվող բնույթին համընթաց իրենց դոկտրինները, կազմակերպչական մշակույթները և որոշումների կայացման գործընթացները հարմարեցնելու՝ռազմական ինստիտուտների անկարողությունից:

2020-2023թթ. ցնցումներին Հայաստանի արձագանքը, որն արտահայտվեց ՀԱՊԿ-ին մասնակցությունը սառեցնելու, Ռուսաստանի հետ ռազմական ու անվտանգային համագործակցության մակարդակը նվազեցնելու, ԵՄ հետ ներգրավվածությունն արագացնելու, արևմտյան միջնորդությամբ պաշտոնական Բաքվի հետ ուղիղ բանակցությունների ձգտելու, ինչպես նաև երկրի պատմության մեջ ռազմական գնումների ամենահավակնոտ ծրագիրը մեկնարկելու տեսքով, երկրի ներսում ներկայացվեց որպես կանխամտածված ռազմավարական վերակողմնորոշում: Իրականում այդ արձագանքն ինչպես իսկական արժեքահեն ընտրությունների, այնպես էլ նախկինում հասանելի

[2]Marc Bloch, Strange Defeat: A Statement of Evidence Written in 1940, trans. Gerard Hopkins (Oxford: Oxford University Press, 1949).

տարբերակների փլուզմամբ պայմանավորված ռազմավարական վերագնահատման արտացոլանքն է: Սրանք իրար հակասող գործոններ չեն, սակայն դրանց մեկտեղումը մթագնում է իրական այն պայմանները, որոնց համեմատ առաջիկա տարիներին ստուգման է ենթարկվելու կերպափոխումը:

Հիշատակված վերակողմնորոշումը տեսանելի ձևով արտացոլում է հայկական զինված ուժերի շարունակաբար զարգացող զորային կառույցը: Ցամաքային զորքերը շարունակում են կազմակերպված լինել Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով տեղակայված մի քանի բանակային կորպուսի շուրջ և լրահամալրված են զարգացող հատուկ նշանակության զորքերով, ընդլայնվող (հակա)օդային պաշտպանության (ՀՕՊ) և հրիթիռահրետանային բաղադրիչով, ինչպես նաև անօդաչու համակարգերի աճող համակազմով: Իսկական զինվորական ծառայության ընդհանուր անձնակազմի քանակը գնահատվում է մոտ 45,000: Շատ ավելի մեծ է զորահավաքային և պահեստազորային ռեսուրսը, որը, սակայն, դեռևս ոչ ավարտուն Տարածքային պաշտպանության ուժերի շրջանակներում մինչ այժմ միայն մասնակիորեն է ձևավորված: Միևնույն ժամանակ, Հայաստանը նաև ծավալում է Ադրբեջանի հետ իր սահմանի պարագծով երկարաժամկետ պաշտպանողական ամրաշինությունների կառուցման խոշոր ծրագիր: Չնայած որ այդ կառույցները, ժամանակակից պատերազմավարման տեխնոլոգիական բնույթի պատճառով, չեն կարող երաշխավորել Հայաստանի տարածքի ամբողջական պաշտպանություն, դրանք հայկական բանակի պաշտպանողական բնույթի ռազմաստրատեգիական կոնցեպցիային (կեցվածքի) ավելացնում են դիմակայունության լրացուցիչ մեկ շերտ և նպաստում ընդհանուր տարածաշրջանային ռազմական հաշվեկշռում պասիվ զսպմանը:

Գնումների բազմազանման առաջընթացի չափի՝ մինչ օրս ամենահստակ ցուցադրությունը տեղի ունեցավ 2026թ. մայիսի 28-ին, երբ Երևանի Հանրապետության հրապարակում անցկացվեց վերջին տասնամյակում առաջին լայնածավալ զինվորական շքերթը: Միջոցառման նպատակը վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից միտումնավոր ձևակերպվել էր ոչ թե որպես ավանդական ուժի ցուցադրություն, այլ որպես 2022թ. ի վեր վերակառուցված բանակի մասին «քաղաքացիներին հաշվետվության ներկայացում»: Այն,

հատկանշականորեն, անցկացվեց 2026թ. հունիսի 7-ին նախատեսված խորհրդարանական ընտրություններից տասը օր առաջ:

Շքերթի ժամանակ ցուցադրվեցին մի շարք սկզբնաղբյուր պետություններից ներմուծված ՍՌՏ նմուշներ՝ ֆրանսիական ՍԵԶԱՐ ինքնագնաց հաուբիցներ (ԻԳՀ) և Բաստիոն զրահափոխադրիչներ (ԶՀՓ), հնդկական Պինակա համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր (ՀԿՌՀ) և Ակաշ զենիթահրթիռային համակարգեր (ԶՀՀ), իրանական Մաջիդ կարճ հեռահարության ՀՕՊ (ԿՀՀՕՊ) համակարգ, չինական CH-4B հետախուզահարվածային դրոնների (անօդաչու թռչող սարքեր - ԱԹՍ), տեղական արտադրության անօդաչու հետախուզահարվածային համակարգեր, և, ուշագրավ կերպով, ռուսաստանյան արտադրության ՍՌՏ մնացորդային շերտ (Տոռ-Մ2ԿՄ ՀՕՊ համակարգեր, Կոռնետ-Մ հակատանկային կառավարվող հրթիռային համակարգեր (ՀՏԿՀՀ) և ՏՈՍ-1Ա ջերմաճնշումային համակարգեր): Բազմազգ այս ցուցադրությունն ինքնին ռազմական գնումների ռազմավարության բազմազանման ամենաակնառու փորձառական ապացույցն է: Այն նաև ընդգծում է սույն փաստաթղթում հետագայում զարգացվող միտքը. սարքակազմի ներմուծման տեխնիկական բազմազանումը անհրաժեշտ, բայց ոչ բավարար նախապայման է: Հայրենական ռազմարդյունաբերական հզորությունների արագ զարգացման հետ միաժամանակ զանազան ազգային ՍՌՏ էկոհոմակարգերի ինտեգրումը մեկ միասնական հարակցված դոկտրինային, նյութատեխնիկական ապահովման և պատրաստության համակարգում շատ ավելի դժվարին և դանդաղ կառուցակարգային խնդիր է, քան բուն ՍՌՏ գնումը:[3]

Միաժամանակ, չնայած շքերթում հարաբերականորեն արդիական ՍՌՏ-ի, ներառյալ մեծաքանակ հայրենական և արտասահմանյան արտադրության անօդաչու սարքերի տպավորիչ ցուցադրմանը, մասնագետները շարունակում են հարցեր բարձրացնել հայկական բանակի գնումների և բանակաշինության ոլորտներում ժամանակակից

[3]Armenpress, “Armenian Armed Forces Unveil Modernised Arsenal at Republic Day Parade,” 28 May 2026. Available at: https://armenpress.am/en/article/1251411

պատերազմավարման դասերի ներառման աստիճանի վերաբերյալ: Օրինակ, հարցերի տեղիք է տալիս տրանսպորտային անօդաչու սարքերի լրիվ բացակայությունը՝ հաշվի առնելով դրանց դերը առաջապահ տեղակայված ստորաբաժանումների նյութատեխնիկական ապահովումն իրականացնելիս և անձնակազմին տարհանելիս, որն այդպիսով դառնում է տարատեսակ հարվածային ու հետախուզական անօդաչու սարքերի առկայությունից ոչ պակաս կարևոր: Այս հանգամանքն իր հերթին առաջ է բերում ավելի լայն հարցադրում առ այն, թե արդյո՞ք մեծածավալ տեխնոլոգիական վերահանդերձումը համաքայլ է ընթանում ժամանակակից պատերազմավարման տեխնոլոգիական և դոկտրինային զարգացման հետ:

1.2. Ռազմական բյուջե և գնումներ. կերպափոխման մասշտաբը

2021-2026թթ. ժամանակահատվածում Հայաստանի ռազմական ծախսերի հետագիծը ցուցադրում է, որ երկիրը գտնվում է իսկական ռազմավարական ճնշման ներքո և գործում տարածաշրջանային անվտանգության բարդ միջավայրում: Ծախսերն աճել են՝ 2021թ. մոտ 620 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 1.69 մլրդ ԱՄՆ դոլարի (ՄՆԴ) 2025թ.՝ չորս տարվա ընթացքում արձանագրելով 172% ավելացում և հասնելով ՀՆԱ-ի մոտ 6%-ի, որը հետխորհրդային տարածքում ամենաբարձր ցուցանիշներից մեկն է: 2026թ. բյուջեն նախատեսում է ծախսերի պլանային նվազեցում մինչև 1.44 մլրդ ԱՄՆ դոլարի (560 մլրդ ՀՀ դրամ - ՀՀԴ)՝ արտացոլելով 2025թ. ինչպես վաշինգտոնյան համաձայնագրով պայմանավորված խաղաղության գործընթացից ակնկալիքները, այնպես էլ գնումների խոշոր պայմանագրերով զգալի կանխավճարային պարտավորություններից հետո հանրային ֆինանսների վերահավասարակշռման կարիքը:[4]

[4] CivilNet, “Armenia to Cut Defence Spending by 15% in 2026,” September 2025. Available at: https://www.civilnet.am/en/news/976151/

Աղյուսակ 1. Հայաստանի ռազմական ծախսերը 2021-2026թթ.

Աղբյուրներ. ՀՀ ֆինանսների նախարարություն, SIVILNET, Armenpress

Տարի	ՀՀՊ (մլրդ)	ՄՆԴ (մոտավոր)	Ծանոթություն
2021	313	620 մլն	Նախապատերազմյան ելակետ, գերազանցապես ռուսաստանյան ծագման ՍՌՏ
2022	347	710 մլն	+11%, գնումների բազմազանման սկիզբ, Ֆրանսիայի հետ գործընկերության մեկնարկ
2023	520	1.03 մլրդ	+50%, Հնդկաստանի/Ֆրանսիայի հետ խոշոր պայմանագրերի ստորագրում
2024	~600	1.25 մլրդ	+21%, ԽԵՀ օժանդակության սկիզբ, գնումների բազմազանման գործարկում
2025	661	1.69 մլրդ	+12%, ՀՕՊ նոր գնումների բանակցություններ, ռազմավարական գործընկերության ձևաչափերի հիմնարկեք Գերմանիայի և որոշ այլ եվրոպական երկրների հետ
2026 (պլանա-վորված)	560	1.44 մլրդ	-15%, հետվաշինգտոնյան համաձայնագրեր, 2024-2025թթ. սկզբնական փուլը հագեցած է կանխավճարային վճարներով:

Բյուջեի ընդլայնումն ուղեկցվում է գնումների աղբյուրների աննախադեպ բազմազանմամբ: Կնքված պայմանագրերի արժեքով Հնդկաստանը դարձել է ամենախոշոր մատակարարը՝ (գնահատվում է 1.5 մլրդ ՄՆԴ-ից ավել)՝ առաքելով Պինակա ՀԿՌՀ-ներ, ԱՏԱԳՍ 155մմ հաուբիցներ, ՄԱրԳ 155մմ ԻԳՀ-ներ, Ակաշ ԶՀՀ-ներ, Զեն Տեխնոլոջիս հակադրոնային համակարգեր, հրաձգային զենք և զինամթերք: Ֆրանսիան դարձել է Հայաստանի

համար ՍՌՏ և առաջադեմ տեխնոլոգիաների առաջատար եվրոպական մատակարար: Կիպրոսի, Հունաստանի և այլ գործընկերների հետ ավելի փոքր, բայց նշանակալի պայմանագրերն օգնում են լրացնել կոնկրետ կարողությունների բացերը:

Ռազմատեխնիկական այս բազմազանումը իրական է և նշանակալի: Հայաստանի պաշտոնյաների հայտարարությունների համաձայն՝ պետության ՍՌՏ ձեռքբերումներում Ռուսաստանի մասնաբաժինը նախքան 2021թ. մոտ 96% ցուցանիշից նվազել է, 2024թ. դրությամբ կազմելով 10%-ից պակաս: Այս միտումն, այնուամենայնիվ, չպետք է մեկնաբանվի որպես մեկ գերիշխող մատակարարի փոխարինում մեկ ուրիշով: Փոխարենը, Հայաստանը միտումնավոր ձգտում է բազմավեկտոր մոդելի, որում առանձին վերցրած ոչ մի գործընկեր ձեռք չի բերի այն լծակները, որոնց նախկինում տիրապետում էր Ռուսաստանը: Սա ռազմավարություն է, որն առավելագույնի է հասցնում քաղաքական ճկունությունը, բայց զուգակցվում է փոխգործունակության (գործառնական համատեղելիության) ապահովման ավելի մեծ բարդության հետ: Ֆրանսիական, հնդկական, իրանական, չինական և մնացորդային ռուսաստանյան համակարգերից յուրաքանչյուրը պահպանման ու տեխսպասարկման, պատրաստության, զինամթերքի և դոկտրինի հետ կապված հարցերին ներկայացնում է առանձին պահանջներ: Սրա հետ միաժամանակ, նշանակալիորեն աճել է նաև Հայաստանի տեղական ռազմարդյունաբերական արտադրությունը, հատկապես լայն սպեկտրով խնդիրների համար անօդաչու սարքերում, հրթիռահրետանային համակարգերում և օպտոէլեկտրոնային սարքավորումներում, որը մասնակիորեն ցուցադրվեց 2026թ. մայիսի 28-ի զինվորական շքերթին:

1.3. Զինված ուժերի կերպափոխման հայեցակարգը. առաջընթաց և բացեր

2024թ. ընդունված Հայաստանի Հանրապետության զինված ուժերի (ՀՀ ԶՈՒ) կերպափոխման հայեցակարգը հանդիսանում է բարեփոխումների գործընթացն ուրվագծող հետպատերազմյան առաջին համապարփակ ծրագրային փաստաթուղթը: Հայեցակարգը 2024-2035թթ. իրականացման ժամանակահատվածում թիրախում է

արհեստավարժեցումը, արհեստավարժ սերժանտական համակարգի զարգացումը, Տարածքային պաշտպանության համակարգի և ակտիվ պահեստազորի ձևավորումը, ղեկավարման ու կառավարման արդիականացումը, հաջորդ սերնդի տեխնոլոգիաների ինտեգրումը, սահմանի պաշտպանության ուժեղացումը, ռազմական կրթության բարեփոխումը, ինչպես նաև ռազմաքաղաքացիական հարաբերությունների բարելավումը:[5]

Հայեցակարգի՝ որպես փաստաթղթի և դրա իրականացման միջև մնում է զգալի բաց, և դրա առկայությունը պետք է ազնվորեն խոստովանել: Լուրջ խնդիր են շարունակում մնալ ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերը, որոնք բացատրվում են մարդու իրավունքների անբավարար պաշտպանությամբ, ծառայակիցներին հալածանքի ենթարկելու շարունակվող մշակույթով և զինվորական կարգապահության թույլ մեխանիզմներով: Սրանք մարտունակության վրա անմիջական ազդեցություն գործող ինստիտուցիոնալ մշակույթի ցուցիչներ են:

Դեռևս ամբողջ ծավալով չի ընդունվել տարածքային պաշտպանության ու ակտիվ պահեստազորի հարցերը կանոնակարգող և Հայեցակարգով նախատեսվող իրավական բազան: ՆԱՏՕ-ի չափորոշիչներով 155 մմ հրետանային տրամաչափին կրիտիկական կարևորության անցումը և դրան համընթաց՝ խորհրդային չափորոշիչներով 152մմ և 122 մմ տրամաչափերից հրաժարումն իրենից ներկայացնում է գնումների և դոկտրինի հարցերում Ռուսաստանի հետ հարաբերությունների անդառնալի խզում: Այնուհանդերձ, նոր ՍՈՏ-ի կիրառման համար պահանջվող կազմակերպչական ու դոկտրինային կառուցակարգերը դեռևս գտնվում են մշակման փուլում:

Համեմատական փորձառական մոտեցումը հստակեցնում է ինչպես կերպափոխման ծավալները, այնպես էլ դեռևս անցնելիք ճանապարհը: Ադրբեջանի ռազմական բյուջեն 2026թ. համար պաշտոնական կանխատեսումներով կազմում է մոտ 3.5-3.8 մլրդ ՄՆԴ՝ դեռևս ավելի

[5] https://mil.am/hy/news/12460

քան կրկնակի գերազանցելով Հայաստանի ցուցանիշը: Տարբերությունն այնուամենայնիվ զգալիորեն նվազել է մինչ 2020թ. ժամանակահատվածին բնորոշ շուրջ 4:1-5:1 հարաբերակցության համեմատ և էլ ավելի է նվազում իրական կարողությունների առումով, եթե հաշվի առնվի ՀՀ ԶՈՒ ՍՌՏ համակազմում որակական փոփոխությունը (արևմտյան չափորոշիչներով հրթիռահրետանային համակարգեր, շերտավորված ՀՕՊ, ճշգրիտ զինամթերք, ևն), այլ ոչ թե պարզապես ռազմական ծախսերի մեծությունը:

Այնուհանդերձ, վերլուծականորեն ավելի կարևոր համեմատություն կլինի ոչ թե երկու պետությունների միջև հաշվեկշիռը, այլ ինստիտուցիոնալ կլանման տեմպը: Հետխորհրդային ողջ տարածքում այն պետությունները, որոնք սարքակազմն արդիականացրել են ավելի արագ, քան բարեհարմարեցրել են դոկտրինն ու հրամանատարական մշակույթը, մշտապես ցուցադրել են իրենց զորային կառույցների անվանական հզորության համեմատ ցածր կատարողականություն: ՀՀ ԶՈՒ Հայեցակարգը աներկբայորեն մատնանշում է այս ռիսկը, սակայն իրականացման 2024-2035թթ. ժամանակահատվածը երկար է՝ տարածաշրջանում փոփոխությունների արագության համեմատ: Ավելին, ոչ մարտական պայմաններում շարունակվող մահվան դեպքերը հուշում են այն մասին, որ բարեփոխման մարդկային չափումը՝ կարգապահությունը, բարեկեցությունը, սերժանտական կազմի արհեստավարժացումը և փոխկապակցված մյուս գործոնները, մնում է մնացած հարցերում տեմպ հավաքող արդիականացման ծրագրում կրիտիկական խոցելիություն:

Առանցքային կառուցվածքային ռիսկը

Սարքակազմի գնումներն առաջ են ընկնում կառուցակարգային բարեփոխումից: ՍՌՏ-ն ստացվում է ավելի արագ, քան ձևավորվում են այն արդյունավետորեն կիրառելու համար պահանջվող կազմակերպչական կառուցվածքը, դոկտրինը, պատրաստության համակարգերը և հրամանատարական մշակույթը: Այս անհավասարակշռությունն ինքնին ռազմավարական խոցելիություն է: Նորագույն ՍՌՏ-ն, որը գործարկվում է այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնց մշակույթը, դոկտրինը և ղեկավարման ու կառավարման համակարգերը ձևավորված են խորհրդային դարաշրջանի մոդելներով, չի կարող ինքնուրույնաբար ապահովել ժամանակակից չափորոշիչներին համահունչ ռազմական կատարողականություն: Այս բացի փակումը, հետևաբար, պետք է դառնա ՀՀ ԶՈՒ ամենահրատապ միջնաժամկետ առաջնահերթությունը:

Հարկ է նշել, որ Հայաստանի պարագայում գնումների՝ դոկտրինային կլանումից առաջ ընկնելը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև քաղաքական նկատառումներով և անձնակազմին առնչվող սահմանափակումներով: Այդ սահմանափակումներից է ավագ և միջին մակարդակի ռազմական ղեկավարների իներցիան ու դիմադրությունը, որոնց կարիերաները ձևավորվել էին 1990-ականներին Ղարաբաղյան առաջին պատերազմի հաղթական ելքով: Մեկ այլ կարևոր սահմանափակում է սպայակազմի որևէ բովանդակալից բազմազանման փաստացի բացակայությունը, երբ արևմտյան ռազմակրթական հաստատությունների փոքր քանակի շրջանավարտներին այդպես էլ չի հաջողվել առաջխաղանալ բարձրագույն հրամանատարական պաշտոնների:

1.4. Ռազմական կրթության կերպափոխում

Ռազմակրթական բարեփոխումը հավանաբար նույնքան նշանակալից է, որքան գնումների բազմազանումը, սակայն այն արժանացել է շատ ավելի փոքր ուշադրության: Տասնամյակներ շարունակ ՀՀ ԶՈՒ ավագ և բարձրաստիճան սպաները գրեթե առանց բացառության ուսումնառություն են ստացել ռուսաստանյան ռազմակրթական հաստատություններում, որոնք թողարկել են հրամանատարներ, որոնց դոկտրինային հայացքները, մասնագիտական բառապաշարը և պրոֆեսիոնալ ծանոթությունները ճնշող մեծամասնությամբ ունեին ռուսաստանյան կողմնորոշում: Սա ծնել է ռուսաստանյան ռազմական մշակույթից կառուցվածքային կախվածություն, որը պահպանվել է պաշտոնական քաղաքական հարաբերությունների վատթարացումից հետո դեռ երկար ժամանակ:

Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիան, որը հիմնադրվեց 2024թ.՝ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի և Մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմավիացիոն համալսարանի միավորման միջոցով, ծառայում է որպես այս կերպափոխման ինստիտուցիոնալ խարիսխ (թեև ոմանք վիճելի են համարում ռազմավիացիոն հաստատությունը համազորային հաստատության կազմում ընդգրկելու միջոցով բարձրագույն ռազմակրթական կազմակերպությունների կառուցվածքի

օպտիմալացման հիմնավորումը): Ակադեմիան, որպես սպայակազմի զորագրման և ծառայության մեջ պահպանման վաղեմի մարտահրավերների հասցեագրման միջոց, իր քառամյա կրթածրագրում ուսանող կուրսանտներին առաջարկում է բնակարան ձեռքբերելու արտոնություն և ուսման առաջադիմության կրթաթոշակներ:

Հինգ հայ կուրսանտներ ուսանել են Ֆրանսիայի Սեն-Սիր ռազմական ակադեմիայում, իսկ Վ. Սարգսյանի անվան ակադեմիան և Սեն Սիրը ձևավորել են համագործակցություն լեռնային պատրաստության ոլորտում՝ կարողություն, որը հատկապես արդիական է Հայաստանի տեղանքի և պաշտպանողական բնույթի ռազմաստրատեգիական կոնցեպցիայի (կեցվածքի) համար: *ՆԱՏՕ-ի Ռազմական կրթության որակի բարձրացման* (ՌԿՈԲ - DEEP) *ծրագիրը* աջակցում է զինվորական մասնագիտական կրթության կրթածրագրերի բարեփոխմանը, իսկ *Արծիվ Գործընկեր* զորավարժություններն ընդլայնել են հայ-ամերիկյան համատեղ պատրաստությունը: Այս ամենի միագումար արդյունքը հայկական զինվորական անձնակազմի մասնագիտական կոորդինատային համակարգի աստիճանական, բայց նշանակալից փոփոխությունն է:

Այս կերպափոխման զուգահեռ, բայց սակավ հանրայնացված ուղղություն է ապահովում Պաշտպանության ազգային հետազոտական համալսարանը (ՊԱՀՀ)՝ Հայաստանի մասնագիտացված հաստատությունը պաշտպանության ոլորտի հետազոտությունների, ռազմավարական ուսումնասիրությունների և հետբուհական ռազմական կրթության համար: Համալսարանը ավելի կարևոր դեր է ձեռք բերում արտերկրի զանազան պաշտոնակից գործընկերների համար, ինչպիսիք են ՆԱՏՕ-ի ՌԿՈԲ ծրագիրը և ԱՄՆ Պատերազմի դեպարտամենտի Պաշտպանության անվտանգային համագործակցության գործակալության Անվտանգության կառավարման ինստիտուտը (ISG): Այս գործընկերների հետ համագործակցությամբ հաստատությունը հյուրընկալում է համապատասխանաբար առաջադեմ տարաբաշխված ուսուցման մեթոդաբանության և Հայաստանի պաշտպանության կերպափոխման հարցերով աշխատաժողովներ: Կրթածրագրի արդիականացման հարցերով Համալսարանը, երկկողմ ձևաչափով, համագործակցում է նաև ՆԱՏՕ-ի անդամ երկրների կրթական հաստատությունների հետ:

Մինչ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիան

պատրաստում է գծային ստորաբաժանումների հաջորդ սերնդի սպաներին, ՊԱՀՀ-ին խնդիր է վերապահված ձևավորել վերլուծական և դոկտրինային կարողություններ (ներառյալ հետազոտական աշխատանքների, ռազմական գործողությունների խաղարկման և ռազմավարական գնահատման հարցերում), որոնց բացակայության պայմաններում ներմուծված ՍՌՏ-ն և պատրաստության հայեցակարգերը չեն կարող արդյունավետորեն բարեհարմարեցվել Հայաստանի առանձնահատուկ ռազմավարական միջավայրին: ՊԱՀՀ-ում արևմտյան շարունակական կայուն ներդրումը (մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի ՌԿՈԲ ծրագրով) հետևաբար նույնքան կարևոր է վերը մատնանշված կառուցակարգային բարեփոխման բացը լրացնելու համար, որքան արևմտյան ներդրումը բուն սպայակազմի պատրաստության մեջ: Սա հատկապես արդիական է այն հանգամանքի հաշվառմամբ, որ և՛ Ռազմական ակադեմիայի և՛ ՊԱՀՀ-ի հիմնական կրթածրագրերը հողակցված են մնում խորհրդային և հետխորհրդային ժառանգություններին, և դրանց բարեհարմարեցումը ներկայիս պայմաններին գործնականում համարվում է կենսական անհրաժեշտություն:

1.5. Հետախուզական ծառայություններ. ամենախորքային և ամենազգայուն բարեփոխումը

Հայաստանի անվտանգային ոլորտի կերպափոխման բոլոր բաղադրիչներից հետախուզական ծառայությունների բարեփոխումը միաժամանակ ամենանշանակալիցն ու ամենազգայունն է: Այն ներառում է այնպիսի ինստիտուտներ, որոնց խորհրդային ժամանակաշրջանից ժառանգած կազմակերպչական մշակույթը, միջանձնային կապերի ցանցերը և օպերատիվ մեթոդները անվտանգային ոլորտի ամբողջ համակարգում ամենից խորապես արմատավորվածներից էին: Ազգային անվտանգության ծառայությունն (ԱԱԾ) իր ինստիտուցիոնալ տոհմածառը վարում է անմիջապես նախորդող պատմական ժամանակաշրջաններից, մինչդեռ մասնագիտացված Արտաքին հետախուզության ծառայության (ԱՀԾ)՝ որպես առանձին կազմակերպության, ստեղծումն իրենից ներկայացնում է հիրավի նոր ինստիտուցիոնալ կազմավորում, այլ ոչ թե արդեն գոյություն ունեցող մարմնի բարեփոխում՝ այստեղից բխող բոլոր կառուցվածքային առավելություններով և մարտահրավերներով:

Այս ծառայություններում օտարերկրյա մնացորդային ազդեցությանը և ներթափանցմանը հակազդելը՝ միաժամանակ արևմտյան գործընկերներին կողմնորոշված, իսկապես անկախ վերլուծական կարողությունների զարգացումը, պահանջում է շարունակական ինստիտուցիոնալ ուշադրություն, որն իր բնույթով իսկ դժվար է հանրայնացնել: Արևմտյան գործընկերների հետ կառուցակարգված ներգրավվածությունը՝ ներառյալ բաց աղբյուրներից հետախուզության, ռադիոէլեկտրոնային հետախուզության, գործակալական հետախուզության և հիբրիդային սպառնալիքների վերլուծության միջոցով, պահանջում է, որ երկու ծառայություններն էլ ցուցաբերեն կառուցվածքային բարեփոխումների և իրենց անձնակազմի խորքային մասնագիտական թարմացման համապատասխան պատրաստականություն:

1.6. Իրավապահություն և արդարադատություն

Ներքին գործերի նախարարությունը (ՆԳՆ) հանդես է գալիս որպես առաջատար իրավապահ մարմին՝ գործառույթների լայն պորտֆելով ներառյալ արտակարգ իրավիճակներին արձագանքը, միգրացիոն ծառայությունները և ոստիկանությունը, այդ թվում՝ վերջերս ձևավորված Ոստիկանության գվարդիան:

Արդարադատության ոլորտը բախվում է դասական հետավտորիտար բարեփոխումների երկընտրանքի, որը բնորոշ է Արևելյան գործընկերության հետխորհրդային բոլոր երկրներին. փորձառու պաշտոնյաներն ունեն ինչպես ինստիտուցիոնալ գիտելիքներ, այնպես էլ տասնամյակների ընթացքում ձևավորված և կուտակված կոռուպցիոն գործելակերպեր: Նրանց փոխարինողները հաճախ նոր կառավարությանը քաղաքականապես ավելի հավատարիմ են, սակայն չունեն գործառնական փորձ և տեխնիկական հմտություններ: Այս երկու տեսակի խանգարիչ հանգամանքների (փորձառու բայց վարկաբեկված, հավատարիմ բայց անփորձ) միջև ճիշտ հավասարակշռություն գտնելը արդարադատության և իրավապահ ոլորտներում կադրերի կառավարման ամենաբարդ մարտահրավերն է:

Հատկանշական է, որ դատաիրավական համակարգի երկու առանցքային՝ Գլխավոր դատախազի և Արդարադատության

նախարարի պաշտոնները զբաղեցնում են կանայք: Կանայք են զբաղեցնում նաև Ներքին գործերի նախարարի, Մարդու իրավունքների պաշտպանի և վերջերս ստեղծված Արտաքին հետախուզության ծառայության ղեկավարի պաշտոնները: **Այս օրինաչափությունն արտացոլում է բարձրաստիճան նշանակումների ժամանակ գենդերային գործոնի գիտակցված առաջնահերթացումը քաղաքական ղեկավարության կողմից՝ մասամբ պայմանավորված նրանով, որ այդկերպ ազդարարվում է արևմտյան կողմնորոշման բարեփոխումների հանձնառություն և նվազեցվում ժառանգորդության ընկալումները հին գվարդիայի այն ցանցերի հետ, որոնք երկու ծառայություններում էլ գերիշխել են նախկին կառավարությունների օրոք:**

ՆԳՆ-ի վերակազմավորումը նույնպես հանդիսանում է անվտանգության ոլորտի ավելի լայն բարեփոխման կարևոր, թեև ոչ բավարար չափով ուսումնասիրված բաղադրիչ: Նախկին Ոստիկանության զորքերի ծառայությունը առանձին Ոստիկանության գվարդիայի բաղադրիչի վերակազմավորելը՝ տարածքային ոստիկանության, պարեկային ոստիկանության և քրեական հետաքննության ավանդական ստորաբաժանումներին զուգահեռ, արտացոլում է հանրային կարգի պահպանման և բարձր ռիսկայնության գործառույթների համար մասնագիտացված, ավելի լավ պատրաստված և ավելի լավ հանդերձված ուժ ստեղծելու փորձ: Այս կառույցը տարանջատված է համայնքային ոստիկանության առօրյա գործառույթներից, սակայն նրանք երկուսն էլ գտնվում են նախարարության միասնական քաղաքացիական հրամանատարության ներքո:

Այս վերակազմավորումն իրականացվում է ռազմաքաղաքացիական հարաբերությունների բարեփոխման ավելի լայն օրակարգին զուգահեռ և կոչված է այն ամրապնդելու: Ըստ այդմ, ներքին անվտանգության արտակարգ իրավիճակներին մասնագիտորեն արձագանքելու ունակ ՆԳՆ-ն նվազեցնում է պետության ներսում կարգուկանոնի պահպանման գործառույթների համար զինված ուժերին դիմելու անհրաժեշտությունը՝ դրանով իսկ ռազմական գերատեսչության առաքելությունը կենտրոնացած պահելով արտաքին զսպման և պաշտպանության վրա: Սա ինքնին երկրի ռազմաստրատեգիական զսպման կոնցեպցիայի հիմքում ընկած ինստիտուցիոնալ «3D» տրամաբանության (որն ավելի հանգամանալից զարգացվում է 5-րդ գլխում) աննշմարելի, բայց կարևոր բաղադրիչն է:

1.7. Անվտանգության խորհուրդ. համակարգում և ռազմավարական պլանավորում

Անվտանգության խորհուրդը (ԱԽ) ներկայումս մշակում է Ազգային անվտանգության նոր ռազմավարություն՝ 2020թ. փաստաթղթին փոխարինելու նպատակով: Այն պետք է ծառայի որպես անվտանգության ոլորտի բոլոր մարմինների ռազմավարական պլանավորման քաղաքական և դոկտրինային հիմք: ԱԽ-ն նաև մշակել է Համապարփակ պաշտպանության և անվտանգության հայեցակարգ՝ մասամբ հիմնվելով ռազմական և քաղաքացիական կարողությունները ազգային պաշտպանության ավելի լայն ռազմավարական շրջանակում ինտեգրելու սկանդինավյան և բալթյան երկրների փորձառության վրա: Հայեցակարգը նաև նպատակ ունի զարգացնել զսպման և դիմակայունության Հայաստանի ներքին կարողությունները, հզորություններն ու մեխանիզմները:

ԱԽ-ի համակարգող դերն ունի հետագա կառուցվածքային ամրապնդման կարիք: ԱԽ գրասենյակը նույնպես կարիք ունի բազմատիրույթ ռիսկերի գնահատման ոլորտում վերլուծական կարողությունների ընդլայնման: Ազգային անվտանգության նոր ռազմավարությունը, որը դեռևս ընդունված չէ, նախատեսում է, որ ԱԽ-ն կմշակի իրագործման փաստաթղթերի սանդղավոր հաջորդականություն: Դրանցից կարող են լինել, օրինակ, Ռազմաքաղաքական զսպման առանձին ռազմավարությունը, Ռազմարդյունաբերական զարգացման վերաքննումը և Տեղեկատվական-իմացական (կոգնիտիվ) պատերազմավարման կարողությունների վերլուծությունը: Դրանցից յուրաքանչյուրը ենթակա կլինի պարբերական շրջափուլերով վերանայման, այլ ոչ թե կհամարվի որպես անփոփոխ վերջնական եզրահանգում:[6]

[6]“Security Sector Reform in Armenia: Status and Prospects,” Caucasus Institute Policy Brief, Yerevan, April 2025.

2. Եվրոպական Միություն. անվտանգության գործիքակազմ և Հայաստանի հետ ռազմավարական ներգրավվածություն

Հայաստանի համար եվրոպական գործընկերների հետ առավել սերտ համագործակցությունը նպաստում է պաշտպանության արդիականացմանը, ինստիտուցիոնալ դիմակայունությանը, անվտանգության ոլորտում գործընկերությունների բազմազանմանը և ավելի կայուն զսպման կարողությունների զարգացմանը: Եվրոպայի համար՝ առավել դիմակայուն, անվտանգ և ռազմավարական առումով փոխկապակցված Հայաստանը կարող է նպաստել ավելի լայն տարածաշրջանում կայունությանը, ամրապնդել տարածաշրջանային փոխկապակցվածությունն ու տնտեսական անվտանգությունը, աջակցել կրիտիկական կարևորության ենթակառուցվածքների և տրանսպորտային միջանցքների դիմակայունությանը և օգնել ռազմավարական վակուումների նվազեցմանը, որոնք այլապես կարող են շահագործվել մրցակցող տերությունների կողմից: Այս իմաստով Հայաստանի ռազմական և անվտանգային կերպափոխումը կարևոր է ոչ միայն երկրի անվտանգության ու ռազմական կարիքների և նրա եվրոպական ուղեգծի համար, այլև ԵՄ-ի անմիջական սահմաններից դուրս ավելի դիմակայուն, կարողունակ և ռազմավարական առումով ավելի հարակցված անվտանգության միջավայր կառուցելու՝ եվրոպական ավելի ընդարձակ նպատակին հասնելու տեսանկյունից:

Ուստի Հայաստանի հետ եվրոպական ավելի խոր ռազմական և անվտանգային ներգրավվածությունը կարող է ծառայել փոխադարձ ռազմավարական շահերի: Սա հատկապես արդիական է *Շրջադարձային մոմենտի (Zeitenwende)* հետ կապված եվրոպական ավելի լայն ռազմավարական վերակողմնորոշման, պաշտպանության պատրաստականության և ռազմական արդյունաբերության դիմակայունության նկատմամբ աճող շեշտադրման, ինչպես նաև Եվրոպայի՝ սեփական անվտանգության համար աճող պատասխանատվության համատեքստում:[7]

[7] Löfflmann, Georg and Riemann, Malte, "If I Could Turn Back Time': Temporal Security Narratives, Ontological Dis-ruption, and Germany's Zeitenwende." European Journal of International Security, 2026, Vol. 11, No. 3.

2.1. ՀԸԳՀ-ից դեպի անվտանգային գործընկեր. որակական տեղաշարժ

Հայաստանի անվտանգային ոլորտի հետ ԵՄ-ի ներգրավվածությունն իրենից ներկայացնում է երկրում վերջինիս ավանդական դերակատարումից որակական շեղում: Նախքան 2022թ., ԵՄ-Հայաստան փոխհարաբերությունները գրեթե ամբողջությամբ ուրվագծված էին Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ - CEPA) քաղաքացիական չափումներով: Այդ չափումներն էին առևտրի հեշտացումը, ինստիտուցիոնալ մերձեցումը, քաղհասարակությանն աջակցելը և զարգացմանն օժանդակելը: Այնտեղ, որտեղ կար անվտանգային համագործակցություն, այն սահմանափակվում էր սահմանների կառավարման, օրենքի գերակայության ծրագրերով և փափուկ անվտանգության գործիքարանով:

2021-2022թթ. ադրբեջանական ներխուժումները և Հայաստանի՝ ԵՄ դիտորդական առաքելություն տեղակայելու խնդրանքը հիմնովին փոխեցին այս շարժընթացը: 2026թ. դրությամբ ԵՄ-ն դարձել էր Հայաստանի առավել տեսանելի և քաղաքական առումով նշանակալի արտաքին անվտանգության գործընկերը՝ Հայաստանում տեղակայելով Ընդհանուր անվտանգության և պաշտպանական քաղաքականության (ԸԱՊՔ - CSDP) երկու առաքելություն, ընդլայնելով Խաղաղության եվրոպական հիմնադրամի (ԽԵՀ - EPF) աջակցությունը և ձևավորելով անվտանգության ու պաշտպանության ոլորտը որպես առաջին հենասյուն ներառող համապարփակ ռազմավարական օրակարգ:

Ներկայիս փուլում անվտանգության ոլորտում Հայաստանի համագործակցությունը Եվրոպական Միության հետ՝ ներառյալ ՀԵՄԱ-ն, ՀԵՄԳԱ-ն, ԽԵՀ-ի աջակցության միջոցառումները, հիբրիդային սպառնալիքներին դիմակայունության ծրագրերը, ճգնաժամերի կառավարման նախաձեռնությունները և ԵՄ անդամ մի շարք պետությունների հետ երկկողմ պաշտպանական համագործակցության ընդլայնումը, հասել է ներգրավվածության այնպիսի մակարդակի, որն ընդամենը մեկ տասնամյակ առաջ հիմնականում բնորոշ էր ԵՄ թեկնածու երկրներին կամ ՆԱՏՕ-ի մերձավոր գործընկերներին:[8]

[8]EU Council, “Strategic Agenda for the EU-Armenia Partnership,” December 2025. Available at: https://www.consilium.europa.eu/en/policies/armenia/

2.2. ՀԵՄԱ. գործողություններ, ազդեցություն և սահմանափակումներ

Հայաստանում Եվրոպական Միության առաքելությունը (ՀԵՄԱ) մեկնարկեց 2023թ. փետրվարի 20-ին՝ 2022թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայաստանում ԵՄ դիտորդական կարողության (EUMCAP) տեղակայումից հետո: Դրա ի հայտ գալը որքանով որ պայմանավորված էր առանձին ԵՄ անդամ պետությունների նախաձեռնությամբ, այդչափ էլ նույնիսկ 2020-2022թթ. իրադարձություններից առաջ Բրյուսելում ձևավորված ինստիտուցիոնալ շարժընթացով: Մասնավորապես, Ռումինիան և Ֆրանսիան վաղ փուլում և ակտիվորեն հանդես էին գալիս Հարավային Կովկասում եվրոպական անվտանգային առավել տեսանելի ներկայության օգտին, այդ թվում՝ նախարարական այցերի և հանրային ջատագովության միջոցով: Նպատակն էր այդկերպ իրենց և իրենց միջոցով՝ ԵՄ-ն ամբողջությամբ, դիրքավորել որպես անվտանգության համար նշանակալի քաղաքական դերակատարներ մի տարածաշրջանում, որտեղ եվրոպական ներգրավվածությունը նախկինում գրեթե բացառապես քաղաքացիական և տնտեսական բնույթ էր կրում:

ՀԵՄԱ-ն անզեն քաղաքացիական ԸԱՊՔ առաքելություն է, որը դիտարկում և զեկուցում է Ադրբեջանի հետ Հայաստանի միջազգային սահմանի երկայնքով (հայկական կողմից) անվտանգության իրավիճակի վերաբերյալ, նպաստում է հակամարտությունից տուժած տարածքներում մարդկային անվտանգությանը և վստահության ամրապնդմանը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Առաքելության մանդատը 2025թ. հունվարին երկարաձգվեց մինչև 2027թ. փետրվար՝ 44 մլն եվրո բյուջեով: Անձնակազմը համալրվում է ԵՄ 25 անդամ պետություններից, ինչպես նաև Կանադայից, իսկ առաքելության շտաբը գտնվում է Եղեգնաձորում՝ ունենալով վեց առաջապահ օպերատիվ բազա:[9]

[9]EEAS, “European Union Mission in Armenia (EUMA).” Available at: https://www.eeas.europa.eu/euma_en

Աղյուսակ 2. ՀԵՄԱ (EUMA) հիմնական բնութագրերը.

Աղբյուրներ՝ EEAS, EU Council

Պարամետր	Մանրամասներ
Գործարկում	2023թ. փետրվարի 20 (նախորդել է EUMCAP-ը՝ 2022թ. հոկտեմբեր–դեկտեմբեր)
Ներկայիս մանդատ	Երկարաձգվել է 2025թ. հունվարին՝ մինչև 2027թ. փետրվարի 19-ը, բյուջեն՝ 44 մլն եվրո
Անձնակազմ	165 միջազգային դիտորդ/վերլուծաբան + 44 տեղական աշխատակից, ընդհանուր՝ ավելի քան 200
Ներդրում կատարող պետություններ	ԵՄ 25 անդամ պետություն + Կանադա՝ որպես ներդրում կատարող երրորդ պետություն
Գործողություններ	2026թ. սկզբի դրությամբ Հայաստանի և Ադրբեջանի սահմանի երկայնքով ավելի քան 4,200 պարեկային առաքելություն
Շտաբ + առաջապահ բազաններ	Շտաբը՝ Եղեգնաձոր, առաջապահ բազաները՝ Գորիս, Իջևան, Ջերմուկ, Կապան, Մարտունի, Եղեգնաձոր
Մանդատ	Անզեն քաղաքացիական ԸԱՊՔ առաքելություն. դիտարկել, մշտադիտարկել և զեկուցել. վստահության ամրապնդում, մարդկային անվտանգություն

ՀԵՄԱ-ն իր պաշտոնական զեկուցման մանդատից բացի կատարել է կարևոր կայունացնող գործառույթ: Հայաստանի պաշտոնյաները, այդ թվում՝ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, բազմիցս ՀԵՄԱ-ի ներդրումը ներկայացրել են հոգեբանական, այլ ոչ միայն գործառնական տեսանկյունից: Առաքելության փաստաթղթավորված ներկայությունը նաև ստեղծել է տեղում տեղի ունեցող զարգացումների անկախ արձանագրություն՝ նեղացնելով մրցակցող պատմույթների տարածման հնարավորությունը և բարձրացնելով հնարավոր էսկալացիոն գործողությունների քաղաքական գինը:

ՀԵՄԱ-ի կառուցվածքային սահմանափակումները նույնպես պետք է նույն հստակությամբ արձանագրվեն: Դրանք են՝ անզեն քաղաքացիական մանդատը, որը չունի կոշտ զսպման կարողություն, սահմանի ադրբեջանական կողմում իրավասության բացակայությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ առաքելության երկարաձգումը պահանջում է Եվրոպական Խորհրդի կոնսենսուս՝ շարունակական արտաքին ճնշման պայմաններում ստեղծելով կառուցվածքային խոցելիություն, քանի որ անդամ ցանկացած պետություն կարող է արգելափակել դրա շարունակումը: Այս սպառնալիքն, օրինակ, հատկապես ակնառու էր Վիկտոր Օրբանի կառավարության օրոք Հունգարիայի պարագայում՝ հաշվի առնելով Ադրբեջանի ղեկավարության հետ նրա սերտ հարաբերությունները: Այս առանձնահատկությունները պարտադիր չէ, որ նախագծային թերություններ լինեն, այլ ԵՄ անվտանգության ճարտարապետության ներհատուկ սահմանափակումներն են: Քանի որ ՀԵՄԱ-ի գործող մանդատի ժամկետն ավարտվում է 2027թ. փետրվարին, Հայաստանն ու ԵՄ-ն կանգնած են առաքելության շրջանակն ու ձևաչափը հարմարափոխելու նպատակահարմարության և եղանակի որոշման հարցի առաջ:

2.3. ՀԵՄԳԱ. հիբրիդային դիմակայունության ճարտարապետությունը

2026թ. ապրիլի 21-ին ԵՄ արտաքին գործերի խորհուրդը հաստատեց Հայաստանում ԵՄ գործընկերության առաքելությունը (ՀԵՄԳԱ)՝ քաղաքացիական ԸԱՊՔ կառույց, որն իրենից ներկայացնում է Հայաստանի ներքին քաղաքացիական անվտանգության ճարտարապետության հետ ԵՄ ներգրավվածության աննախադեպ ձևաչափ: Ի տարբերություն ՀԵՄԱ-ի, որը կենտրոնացած է սահմանների մշտադիտարկման և վստահության ամրապնդման վրա, ՀԵՄԳԱ-ն թիրախում է ավանդական ռազմական հակամարտության շեմը չհատող մարտահրավերները՝ օտարերկրյա տեղեկատվական նենգափոխումն ու միջամտությունը (OSNM - FIMI), կիբեռհանցագործությունները, ընտրական և քաղաքական համատեքստերում ապօրինի ֆինանսական հոսքերը և ժողովրդավարական ավելի լայն դիմակայունությունը: Հայաստանը առաքելության համար պաշտոնապես դիմել էր 2025թ. դեկտեմբերին՝ հետևելով Մոլդովայի օրինակին, որտեղ ԵՄ համանման

խորհրդատվական ներկայությունն աջակցել էր ժողովրդավարական դիմակայունությանը՝ 2025թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ:

Հասանելի բաց աղբյուրների համաձայն՝ ՀԵՄԳԱ-ն Երևանում կտեղակայի 20-30 փորձագետ՝ Հայաստանի համապատասխան նախարարություններին և գերատեսչություններին տրամադրելով ռազմավարական խորհրդատվություն և կարողությունների զարգացման աջակցություն: Առաքելության մանդատը բացահայտորեն ներառում է հիբրիդային սպառնալիքներին դիմակայունությունը և ՕՏՆՄ-ին հակազդումը՝ այն ոլորտները, որոնցում Ուկրաինայի, բալթյան պետությունների, Մոլդովայի և այլ առաջնագծային գործընկերների հետ ներգրավվածության միջոցով ձևավորված ԵՄ ինստիտուցիոնալ փորձն անմիջականորեն կիրառելի է Հայաստանի պարագայում: Այն ղեկավարում է ռումինացի դիվանագետ, ով նախկինում ղեկավարել է Մոլդովայում ԵՄ համանման առաքելությունը:

2.4. Խաղաղության եվրոպական հիմնադրամ. ֆիզիկական կարողության կառուցում

2024թ. հուլիսին ԵՄ-ն հաստատեց Հայաստանի համար ԽԵՀ-ի շրջանակում իր առաջին աջակցության փաթեթը՝ 10 մլն եվրո՝ նյութատեխնիկական և անձնակազմի անվտանգության ապահովման ոչ մահաբեր սարքավորումների համար, որոնք բավարար են գումարտակի չափսի տեղակայելի ստորաբաժանում և համապատասխան նյութատեխնիկական ապահովման ենթակառուցվածք հանդերձելու համար: 2026թ. հունվարին հաստատվեց 20 մլն եվրո արժեքով երկրորդ միջոցառումը՝ բրիգադի չափսի զորամիավորումը նյութատեխնիկապես ապահովելու, դիմակայունությունն ու օպերատիվ պատրաստվածությունը բարելավելու և ճգնաժային արձագանքման կարողությունները ամրապնդելու նպատակով: 2026թ. սկզբի դրությամբ Հայաստանի համար ԽԵՀ-ի շրջանակում ընդհանուր աջակցության ծավալը հասավ 30 մլն եվրոյի:[10]

[10]Council of the EU, “European Peace Facility: Council Adopts the Second Bilateral Assistance Measure in Support of Armenia,” Press release, 29 January 2026. Available at: https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2026/01/29/european-peace-facility-council-adopts-the-second-bilateral-assistance-measure-in-support-of-armenia/

Այս ցուցանիշները բացարձակ արժեքով մնում են համեստ՝ 2025թ. վերջի դրությամբ Մոլդովային հատկացված 197 մլն եվրոյի և Ուկրաինային հատկացված 6.4 մլրդ եվրոյի համեմատ: Սակայն դրանց քաղաքական նշանակությունը որակապես կարևոր է. առաջին անգամ ԵՄ-ն իր անվտանգության հիմնական գործիքներից մեկի՝ ԽԵՀ-ի միջոցով պաշտպանության ոլորտի ուղղակի ինստիտուցիոնալացված աջակցություն տրամադրեց ոչ թեկնածու և ՆԱՏՕ-ին չանդամակցող գործընկերոջը: Այս նախադեպը, սկզբունքորեն, կարող է ընդլայնվել: Հայաստանի և Ադրբեջանի խաղաղության գործընթացի ամրապնդմանը և ԵՄ չափորոշիչներով գործող ուժերի հետ Հայաստանի փոխգործունակության բարձրացմանը զուգընթաց կարող է հիմք ստեղծվել աջակցության ընդլայնման համար՝ պոտենցիալ ներառելով նաև մահաբեր սարքավորումների ԽԵՀ-ի կատեգորիաներ՝ Հայաստանի պաշտպանական զսպման կարիքներին համահունչ:

ԵՄ անվտանգության ճարտարապետությունը Հայաստանի համար. երեք փոխլրացնող հենասյուներ

ՀԵՄԱ (սահմանների մշտադիտարկում և վստահության ձևավորում, 2023-2027թթ., 44 մլն եվրո), ՀԵՄԳԱ (հիբրիդային սպառնալիքներին դիմակայունություն և ինստիտուցիոնալ խորհրդատվություն, 2026թ. ապրիլից) և ԽԵՀ (ոչ մահաբեր պաշտպանական կարողությունների զարգացում, 30 մլն եվրո, 20242026թթ.): Միասին դրանք ներկայացնում են Հարավային Կովկասում ԵՄ անվտանգային ներգրավվածության աննախադեպ խորություն՝ որակապես տարբերվելով մինչև 2022թ. գոյություն ունեցած որևէ ձևաչափից և, եթե ոչ մասշտաբով, ապա կառուցվածքային առումով համադրելի լինելով թեկնածու երկրներին ԵՄ տրամադրած անվտանգային աջակցության ձևերի հետ:

ՀԵՄԱ-ն ապահովում է արտաքին մշտադիտարկման և վստահության ամրապնդման շերտը, ՀԵՄԳԱ-ն՝ ներքին ինստիտուցիոնալ դիմակայունության շերտը, իսկ ԽԵՀ-ը՝ ֆիզիկական կարողությունների զարգացման շերտը: ԵՄ-ի ներգրավվածության տրամաբանական հաջորդ քայլը նոր գործիքների ստեղծումը չէ, այլ այս երեքի կանխամտածված ինտեգրումը: Օրինակ՝ դա կարող է ներառել ՕՏՆՄ-ին հակազդելու ՀԵՄԳԱ-ի խորհրդատվական աշխատանքի միավորումը տեղում իրավիճակի վերաբերյալ փաստաթղթավորված զեկուցման ՀԵՄԱ-ի գործառույթի

հետ: Մեկ այլ տարբերակ է ԽԵՀ-ի ֆինանսավորմամբ նյութատեխնիկական ապահովման արդիականացման շաղկապումը տարածքային պաշտպանության և պահեստազորային ուժերի կառույցների հետ, որոնց ստեղծման գործում Հայաստանին առանձին կերպով աջակցում են եվրոպական երկկողմ գործընկերները: Ցանկացած առանձին երկկողմ գործընկերոջ նկատմամբ ԵՄ-ի համեմատական առավելությունը քաղաքացիական դիմակայունության, մշտադիտարկման և կոշտ կարողությունների չափումների միաժամանակ ինտեգրում ապահովելու հենց այս կարողությունն է:

Սակայն այդ առավելության իրացումը պահանջում է, որ Բրյուսելն ու պաշտոնական Երևանը այս երեք գործիքները դիտարկեն որպես միասնական և հարակցված անվտանգային գործընկերության բաղադրիչներ, այլ ոչ թե որպես միմյանցից անկախ բանակցվող և թարմացվող երեք առանձին բյուրոկրատական ուղիներ:

3. Հայաստան և ՆԱՏՕ. խորացում առանց անդամակցության

3.1. Պատմական ելակետ և կառուցվածքային սահմանափակումներ

Հայաստանի հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ սկիզբ են առնում 1992թ., երբ Հայաստանը միացավ Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդին (1997թ. վերանվանվեց Եվրաատլանտյան գործընկերության խորհրդի): Հայաստանը 1994թ. հոկտեմբերին միացավ «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳհԽ) ծրագրին, 1999թ. Երևանում բացեց ՆԱՏՕ-ի փոխգործակցության գրասենյակ, իսկ 2004թ. Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում հիմնեց մշտական դիվանագիտական ներկայացուցչություն: 2005թ. դեկտեմբերին Հայաստանն ընդունեց ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործընկերության գործողությունների իր առաջին ծրագիրը (ԱԳԳԾ): 2004թ. ի վեր այն խաղաղապահ զորքեր է տրամադրում ՆԱՏՕ-ի գլխավորած Կոսովոյի ուժերին (KFOR), իսկ 2009թ.-ից մասնակցել է Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցության ուժերի (ISAF) գործողությանը՝ հետագայում շարունակելով իր ներդրումը *Վճռական աջակցություն* առաքելությանը՝ մինչև 2021թ. դրա ավարտը:

Այդ ամբողջ ժամանակահատվածում, սակայն, պաշտոնական Երևանը երբեք ՆԱՏՕ-ն չի դիտարկել որպես անվտանգության առաջնային կամ այլընտրանքային երաշխավորի և երբեք չի հետապնդել անդամակցության նպատակ, ի տարբերություն Վրաստանի կամ Ուկրաինայի: Դրան նպաստել են երկու հիմնական գործոն: Առաջինը՝ ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցության և Ռուսաստանի հետ երկկողմ անվտանգային կապերի համատեքստում պաշտոնական Մոսկվայի արձագանքի վերաբերյալ մտահոգությունները զուգորդվում էին Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ Ադրբեջանի հետ անհրաժեշտ ռազմական և ռազմատեխնիկական հավասարակշռությունը պահպանելու ընկալվող անհրաժեշտությամբ: Երկրորդը՝ ՆԱՏՕ-ում Թուրքիայի կենտրոնական դերը փաստացի բացառեց Դաշինքը որպես Հայաստանի անվտանգության վստահելի երաշխավոր ընկալելու հնարավորությունը՝ հաշվի առնելով պաշտոնական Անկարայի և Բաքվի միջև սերտ ռազմավարական գործընկերությունը: [11]

Այս երկու սահմանափակումներն այժմ աստիճանաբար կորցնում են իրենց ուժը, թեև դրանցից ոչ մեկը չի վերացել: ՀԱՊԿ-ում Հայաստանի մասնակցության սառեցումը մասամբ վերացրեց ՆԱՏՕ-ի հետ ավելի խոր ներգրավվածության հիմնական քաղաքական խոչընդոտը: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացն աստիճանաբար նվազեցնում է երկրորդ սահմանափակումը, թեև Թուրքիայի երկկողմ հարաբերությունները Ադրբեջանի հետ շարունակում են մնալ կառուցվածքային սահմանափակում այն հարցում, թե որքան հեռու է ՆԱՏՕ-ն՝ որպես ինստիտուտ, պատրաստ գնալու Հարավային Կովկասում Հայաստանի հարցում: Այս սահմանափակումն է նաև բացատրում, թե ինչու ՆԱՏՕ-ն, ի տարբերություն ԵՄ-ի, միայն լուսանցքային դեր է ունեցել բուն Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացում:

Հետևաբար, երեք տասնամյակ շարունակ Հայաստան-ՆԱՏՕ համագործակցությունը գրեթե ամբողջությամբ կառուցված էր ոչ

[11] NATO, “Relations with Armenia.” Available at: https://www.nato.int/cps/en/natohq/topics_48893.htm

մահաբեր ձևաչափերի շուրջ: Այդ ձևաչափերն էին պաշտպանության ոլորտի ինստիտուտների ձևավորումը, պլանավորման, ծրագրման և բյուջետավորման բարեփոխումը, ռազմաքաղաքացիական հարաբերությունները, ռազմական կրթության կատարելագործումը, խաղաղապահ կարողությունների զարգացումը, *Եվրաատլանտյան աղետների արձագանքման համակարգման կենտրոնի* միջոցով ճգնաժամերի կառավարումը, գիտության և անվտանգության ծրագիրը, *Ահաբեկչության դեմ պայքարի գործընկերության գործողությունների ծրագրի* շրջանակում ահաբեկչության դեմ պայքարը, ինչպես նաև սպառազինությունների վերահսկողությունը: Այս գործողությունները համակարգվում էին ԱԳԾԾ-ի, դրան փոխլրացնող *Անհատական գործընկերության ծրագրի* (IPP) և *Պլանավորման ու վերանայման գործընթացի* (ՊՎԳ) միջոցով: Այս վերջինը գործընկերության նպատակների, կարողությունների գնահատման և կառուցակարգված հետադարձ կապի միջոցով զարգացնում է փոխգործունակ կարողություններ:

3.2. Հայաստան-ՆԱՏՕ կարգաբերված ռազմավարական համագործակցության շարժընթացն ու հեռանկարները

ՆԱՏՕ-ի և Հայաստանի միջև համագործակցության խորացումը շարունակ ամրապնդվում է, այլ ոչ թե փոխարինվում, առանձին անդամ պետությունների հետ երկկողմ ռազմատեխնիկական համագործակցությամբ՝ առավել տեսանելիորեն Ֆրանսիայի, իսկ հեռանկարում՝ Հունաստանի, Միացյալ Նահանգների և Միացյալ Թագավորության հետ: Վերջինս 2025թ. վերացրել է Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ ԵԱՀԿ տարածքում իր կողմից երկար տարիներ կիրառվող սպառազինությունների արտահանման բեռնարգելքը: Արևմտյան սպառազինությունների մատակարարումների աճին զուգահեռ տեղի է ունենում նաև ՆԱՏՕ-ի չափորոշիչների, կանոնակարգերի և դոկտրինի գործնական ներտարածումը: Դրանք տարածվում են ուսուցման, զորավարժությունների և ներդրված խորհրդատուների միջոցով, ընդ որում՝ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի մասնագետներն արդեն տարբեր մակարդակներում ներգրավված են Հայաստանի պաշտպանության նախարարությունում և Զինված ուժերի Գլխավոր շտաբում:

ՆԱՏՕ-ի հնարավոր ներգրավվածության ավելի նոր ոլորտը վերաբերում է հիբրիդային, ասիմետրիկ և կիբեռսպառնալիքների դեմ պայքարին, ինչպես նաև Ռուսաստան-Ուկրաինա պատերազմից դասեր քաղելուն: Սա ոլորտ է, որտեղ Ռուսաստանի ներդրումը նվազագույնի է հասցվել, իսկ ՆԱՏՕ-ի փորձառությունը լրացնում է ստիճանաբար ավելի էական դարձող բացը: Միևնույն ժամանակ, Ուկրաինայում ռազմական գործողությունների գրեթե հինգ տարիների ընթացքում Ռուսաստանն ու Ուկրաինան իրենք ունեն ժամանակակից ցամաքային պատերազմավարման ամենահարուստ գործնական փորձերից մեկը (նույնիսկ ՆԱՏՕ-ի առաջատար ռազմական տերությունների համեմատ)՝ ներառյալ անօդաչու սարքերի և ժամանակակից այլ տեխնոլոգիաների ու համակարգերի կիրառումը:

Համագործակցության խորացմանը հակակշռող սահմանափակումները նույնպես արժանի են սթափ գնահատման: Վրաստանի՝ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների ուղեգծի հնարավոր անկումը և ավելի լայն առումով՝ ԱՄՆ վերաչափաբերումը դեպի հնդկա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան՝ ի վնաս եվրոպական անվտանգային կայուն ներգրավվածության, կարող են մարել Դաշինքի մակարդակով ուշադրությունը Հարավային Կովկասից: Այս ամենը տեղի է ունեցել՝ չնայած ՆԱՏՕ-ի ակտիվ անդամ և անմիջական հարևան Թուրքիայի՝ տարածաշրջանին ցուցաբերած մշտական ուշադրությանը: Միևնույն ժամանակ, ռազմական պլանավորման ՆԱՏՕ-ի որոշ գործառույթներ կարող են անցնել ԵՄ-ին՝ վերջինիս կողմից սեփական ռազմավարական ինքնավարության ձևավորմանը զուգընթաց: Սա նշանակում է, որ Հայաստանի՝ ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի հետ համագործակցության ուղիներն աստիճանական կերպով մասնակիորեն համընկնելու են, պաշտոնական Երևանից պահանջելով այս երկու հարաբերությունները կառավարել որպես միասնական և համադասված թղթապանակ, ոչ թե որպես առանձին գործաշապիկներ:

Այս բոլոր գործոնները միասին առած՝ կարճաժամկետ հեռանկարում Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների ամենահիրատեսական սցենարը կարելի է անվանակոչել Կարգաբերված ռազմավարական համագործակցություն: Այն կհանգեցնի դեպի եվրաատլանտյան ռազմական և ռազմավարական համագործակցություն աստիճանական

անցման, ԳհԽ (PfP) և առնչվող ծրագրերում առավելագույն ներգրավվածության, ՆԱՏՕ-ի առաջատար պետությունների հետ ավելի ինտենսիվ երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության, ինչպես նաև անվտանգային այս ինտեգրմանը քաղաքական աջակցություն ձևավորելուն ուղղված ներքին հանրային դիվանագիտության տևական ջանքերի գործադրման: Այսպիսի սցենարը չի ներառում, ոչ էլ պահանջում է անդամակցության հեռանկար, քանի որ միտումնավոր չափաբերված է դեպի իրական մատչելին՝ հաշվի առնելով Թուրքիայի դերակատարումը և խաղաղության դեռևս դյուրաբեկ գործընթացը: Այնուամենայնիվ, այն կարող է ապահովել ինստիտուցիոնալ և կարողությունների վրա հենված այն առավելություններից շատերը, որոնք ՆԱՏՕ-ի հետ գործընկերությունը կարող է տրամադրել Դաշինքի անդամ չհանդիսացող պետությանը:[12]

4. Երկկողմ անվտանգային գործընկերություններ. հանգուցային գործընկերները

4.1. Ֆրանսիա. Խարսխային եվրոպական գործընկեր

Ֆրանսիան պաշտոնական Երևանի հետ պաշտպանության ոլորտում փաստացիորեն ներգրավվածություն չունենալուց վերջին տարիների ընթացքում վերափոխվել է Հայաստանի ամենակարևոր և տեխնոլոգիապես առաջադեմ եվրոպական երկկողմ անվտանգային գործընկերոջ: Չնայած Հայաստանի և Ֆրանսիայի միջև խորը պատմական ու մշակութային կապերին, ինչպես նաև Ֆրանսիայում խոշոր և լավ ինտեգրված հայկական համայնքի առկայությանը, երկու երկրների միջև պաշտպանության և անվտանգության ոլորտներում առարկայական համագործակցությանը սկզբնական փուլում զսպում էր ԵԱՀԿ Մինսկի խմբում պաշտոնական Փարիզի համանախագահությունը: Ռազմական և անվտանգային ներկայիս պատկառելի գործընկերությունը պաշտոնապես

[12] NATO, “NATO Deputy Secretary General Highlights Progress in Defence Capacity Building with Partners,” June 2026.

- ՍՈՏ. 36 միավոր ՍԵՉԱՐ 155մմ ԻԳՀ (պայմանագիրը կնքվել է 2023-2024թթ., առաքվելով 2025թ. ընթացքում և ցուցադրվելով 2026թ. մայիսի շքերթին); 50 միավոր Բաստիոն ԶՀՓ (առաքումները մեկնարկել են 2024թ. կեսերից), 3 միավոր Թալես GM-200 ռադիոտեղորոշիչ կայան (ՌՏԿ, առաքվել են 2024թ.), 15 միավոր դյուրակիր ՀՏԿՀՀ (առաքվել են 2024թ.), ինչպես նաև ընթացիկ բանակցություններ կարճ և միջին հեռահարության ՀՕՊ համակարգերի ձեռքբերման համար:[13]

- Կրթություն. ՀՀ ԶՈՒ հինգ սպայի ուսուցում Սեն Սիրի ռազմական ակադեմիայում, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա-Սեն Սիր համագործակցություն լեռնային պատրաստության ուղղությամբ, ֆրանսիական մասնագետների կողմից հրետանու նշանառուների և ՌՏԿ օպերատորների պատրաստության աշխատաժողովների անցկացում:

- 278.5 մլն եվրո արժողությամբ պայմանագրային պատվերների համեմատ արտոնագրային արտահանման սահմանված 2.756 մլրդ եվրո առաստաղը ներկայացնում է պոտենցիալ, այլ ոչ թե հանձնառություն: Իրացման տեմպը կախված է Հայաստանի ֆինանսական կարողություններից և քաղաքական առաջնահերթությունների սահմանումից:

Ֆրանսիայի շարժառիթավորումները արժանի են հակիրճ պարզաբանման, քանի որ դրանք են ձևավորում, փոխհարաբերությունների մնայուն լինելու հավանականությունը: Ֆրանսիայի ներգրավվածությունն իր մեջ զուգադրում է մի քանի տարբեր մղումներ: Դրանք են. առաջին՝ 2020-2023թթ. հայաստանյան փորձի դիտարկումը որպես Ֆրանսիայի և Եվրոպայի ռազմարդյունաբերական ինքնավարության համար ուսանելի դաս: Երկրորդ՝ Եվրոպայում վերազինման գործընթացների ֆոնին արտահանման պատվերներ ստանալու հարցում ֆրանսիական ռազմարդյունաբերական համալիրի շահերը: Երրորդ՝ ավելի լայն իմաստով Ֆրանսիայի արտաքին

[13] French Ministry of Armed Forces, Rapport au Parlement sur les exportations d'armement de la France 2025 (Report to Parliament on French Arms Exports 2025), Defence Information and Communication Delegation (DICD), Paris, July 2025.

քաղաքականության ռազմավարությունը, որն իրեն դիրքավորում է որպես անվտանգային դերակատար այն տարածաշրջաններում, որտեղ նկատվում է ռուսաստանյան ազդեցության նահանջ՝ համանման ավելի վաղ ժամանակաշրջանի ֆրանսիական ներգրավվածությանը Արևելյան Եվրոպայի որոշ մասերում, հատկապես Ռումինիայում: Վերջապես՝ Ֆրանսիայի քաղաքական կառավարող շրջաններում այն համընդհանուր ըմբռնումը, որ կայուն, դեպի Արևմուտք կողմնորոշմամբ Հայաստանը համապատասխանում է մրցակցային հարևանության մեջ Եվրոպայի ռազմավարական շահերին:

Այս մղումները փոխադարձ ամրապնդող, այլ ոչ թե մրցակից են միմյանց, և հենց այս պատճառով է, որ երկու երկրների փոխհարաբերությունը դուրս եկավ ավելի դիմակայուն և դինամիկ, քան պաշտպանության ոլորտում համանման հնության երկկողմ գործընկերությունների մեծ մասը: Սա նաև նշանակում է, որ կապերի հետագա խորացումը այսուհետ ևս կախված է լինելու մի շարք գործոնների փոխներգործությունից: Այդ գործոններն են նոր հնարավորությունները կլանելու Հայաստանի ունակությունը, եվրոպական (մասնավորապես՝ ուկրաինական) մրցակից պահանջարկի ֆոնին ֆրանսիական ռազմարդյունաբերական արտադրության սահմանափակումները, ինչպես նաև ընդհանուր քաղաքական կլիման պաշտոնական Փարիզի, Անկարայի և Բաքվի միջև:

4.2. Հունաստան, Կիպրոս, Գերմանիա, Միացյալ Թագավորություն և Միացյալ Նահանգներ

Հունաստանը և Կիպրոսը Հայաստանի հետ ձևավորել են ընդհանուր ռազմավարական շահերի վրա հիմնված եռակողմ անվտանգային հարաբերություններ, որոնք ներառում են ռազմական պատրաստություն, կուրսանտների փոխանակումներ, համատեղ զորավարժություններ, խորհրդատվական աջակցություն և ԵՄ ինստիտուտների շրջանակում Հայաստանի շահերի ջատագովում:

Գերմանիայի դերակատարումը կենտրոնացած է պաշտպանական ինստիտուտների կառուցման, ռազմաքաղաքացիական հարաբերությունների և օրենքի գերակայության ոլորտների վրա: Այս դերակատարումը ձևակերպվել է 2025թ. դեկտեմբերին կնքված

երկկողմ ռազմավարական գործընկերությամբ, որին նախորդել էր մեկ տարի առաջ պաշտոնական Բեռլինի կողմից Երևանի նկատմամբ սպառազինության բեռնարգելքի վերացումը:

Միացյալ Թագավորությունը, որը նույնպես 2025թ. վերացրել է Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ իր երկարամյա սպառազինության բեռնարգելքը, զարգացնում է ակտիվ ներգրավվածություն հիբրիդային սպառնալիքների վերլուծության, հետախուզական ծառայությունների մասնագիտական զարգացման և պաշտպանության ոլորտի բարեփոխումներին խորհրդատվական աջակցության ուղղություններում:

Միացյալ Նահանգները վարել է չափագրված ներգրավվածության քաղաքականություն՝ աջակցելով պաշտպանական բարեփոխումներին և արևմտյան ինտեգրմանը՝ միաժամանակ խուսափելով խաղաղության հաստատման գործընթացի համատեքստում որպես էսկալացիոն ընկալվող քայլերից: Ամենամյա, պարբերաբար անցկացվող Արծիվ գործընկեր զորավարժությունների շարունակությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունում պաշտպանության հարցերով ԱՄՆ խորհրդականի նշանակումը, ինչպես նաև ոչ մահաբեր, սակայն տեխնոլոգիապես առաջադեմ ամերիկյան տեխնիկայի (կապի համակարգեր, անօդաչու սարքեր և այլ սարքակազմ) ձեռքբերումը ազդարարում են հարաբերությունների մակարդակի բարձրացման մասին:

Պաշտպանության ոլորտում Հայաստան-ԱՄՆ համագործակցության նշանակալի շրջադարձային փուլ էր 2026թ. ԱՄՆ Արտաքին ռազմական վաճառքներ (FMS) ծրագրի միջոցով Shield AI MQ-35 V-BAT անօդաչու թռչող համակարգերի (ԱԹՀ) ձեռքբերումը: Դրանց մարտական հետախուզության, դիտարկման և տեղազննության (ՀԴՏ - ISR) արժեքից անդին, այդ գնումը խորհրդանշում էր Հայաստանի պաշտպանության ոլորտի արդիականացմանն աջակցելու պաշտոնական Վաշինգտոնի աճող պատրաստակամությունը և նշանավորում Հայաստանին ԱՄՆ արտադրության ռազմական անօդաչուների առաջին հրապարակայնորեն հաստատված մատակարարումներից մեկը: Բացի այդ, ԱՄՆ քաղաքական հավանությունը, ըստ երևույթին, եղել է Ֆրանսիայի կողմից մահաբեր նշանակության սպառազինության մատակարարումների նախադրյալ, ինչը վկայում է, որ պաշտպանության ոլորտում Հայաստան-ԱՄՆ)

համագործակցությունը գործում է ավելի լայն արևմտյան ռազմավարական համահարթեցման շրջանակում, նույնիսկ այնտեղ, որտեղ դա միշտ չէ, որ հրապարակայնորեն տեսանելի է:

2025թ. օգոստոսի Վաշինգտոնի համաձայնագրերը և Միջազգային խաղաղության և բարգավաճման Թրամփի ուղու (TRIPP միջանցքային նախագծի ընթացիկ շրջանակները ներկայացնում են ամերիկյան ռազմավարական ներդրում Հայաստանի տարածքային ամբողջականության և տնտեսական կենսունակության մեջ՝ երկկողմ անվտանգային գործընկերությանը ավելացնելով հաղորդակցային և աշխարհաքաղաքական հարթություն: Բաց աղբյուրներից ստացված որոշ տեղեկություններ մատնանշել են ԱՄՆ-ի դերակատարումը ՀՀ ԶՈՒ կապի և հակադրոնային կարողություններին աջակցելու գործում՝ որպես այս ավելի լայն խորհրդատվական հարաբերությունների մաս: Նման համագործակցության կոնկրետ մանրամասները բավարար չափով հրապարակայնորեն փաստագրված չեն՝ վստահությամբ բնութագրելու համար, ուստի այն պետք է դիտարկել որպես մնացած առումներով լավ փաստագրված գործընկերության հավանական, սակայն չհաստատված չափում:[14] Ակտիվացել է նաև ՀՀ ԶՈՒ զինծառայողների համար վերապատրաստման և կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ ԱՄՆ-ի աջակցությունը:

[14] Eduard Arakelyan and Karena Avedissian, “Diversifying Armenia’s Defence: Shifting Alliances and Military Modernisation,” European Security & Defence, May 2025. Available at: https://euro-sd.com/2025/05/articles/44516/

Աղյուսակ 3. Երկկողմ անվտանգային գործընկերություններ

Աղբյուրներ՝ հեղինակի վերլուծություն, SIPRI

Գործընկեր	Առաջնային ուղղություններ	Առանցքային գործիքներ/ իրադարձություններ	Հիմնական սահմանափակումներ
Ֆրանսիա	ՍՌՏ, պատրաստություն, խորհրդատվություն, հետախուզություն	ՍԵՋԱՐ/Բաստիոն/CM-200, Սեն Սիր, 2023թ. ի վեր Ֆրանսիայի ռազմական առաքելություն Երևանում	Տեմպը կախված է Հայաստանի ֆինանսական կարողություններից
Հունաստան/ Կիպրոս	Պատրաստություն, կրթություն, զորավարժություններ, ԵՄ-ում ջատագովություն	Եռակողմ շրջանակ, ՀԵՄԱ-ի ջատագովություն, կուրսանտների փոխանակումներ	ՍՌՏ սահմանափակ մատակարարումներ, բազմակողմ համատեքստ
Գերմանիա	Ինստիտուտների զարգացում, ռազմաքաղաքացիական հարաբերություններ	2025թ. երկկողմ ռազմավարական գործընկերություն, 2024թ. ՍՌՏ բեռնարգելքի վերացում	ՍՌՏ մատակարարումներ չկան, հիմնականում փափուկ անվտանգություն
Միացյալ Թագավորություն (ՄԹ)	Հիբրիդային սպառնալիքներ, հետախուզություն, բարեփոխումների խորհրդատվություն	ՄԹ միջազգային զարգացման ծրագրեր, 2025թ ՍՌՏ բեռնարգելքի վերացում	Հետ-Brexit, երկկողմ անվտանգության պաշտոնական շրջանակ դեռևս չկա
ԱՄՆ	Բարեփոխումների աջակցություն, խաղաղապահություն, խաղաղության գործընթաց	Արծիվ գործընկեր (ամենամյա՝ 2023թ. ի վեր), Վաշինգտոնի համաձայնագրեր, TRIPP, կապի/ԱԹՍ/հակադրոնային ոլորտներում արձանագրված խորհրդատվական դեր	Մահաբեր ՍՌՏ հաստատված մատակարարումներ չկան, խաղաղության գործընթացի նրբախնդրություն

5. ԵՄ-ի աջակցություն և փորձի փոխանակում. կոնվենցիոնալ զսպում և բազմատիրույթ դիմակայունություն

5.1. Ժամանակակից պատերազմների և հակամարտությունների փոփոխվող բնույթը. առանցքային փորձառական դասեր

2023 թվականից ի վեր Հայաստանի շուրջ ռազմավարական համատեքստը նկատելիորեն փոխվել է, իսկ 2025 թվականի Վաշինգտոնի համաձայնագրերը (ներառյալ Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի նախաստորագրումը) էապես թուլացրել են պաշտոնական Երևանի ու Բաքվի և, հետևաբար, վերջինիս հիմնական աջակից Անկարայի միջև հարաբերություններում առկա լարվածությունը: Այնուամենայնիվ, տարածաշրջանային սպառնալիքներն ու մարտահրավերները, այդ

թվում՝ ռազմական բնույթի, չեն վերացել, ինչպես նաև չեն վերացել կայունության դեմ արտաքին այլ դերակատարներից բխող սպառնալիքները, այդ թվում՝ ոչ կինետիկ բնույթի: Այս պայմաններում զսպումն ու դիմակայունությունը շարունակում են մնալ Հայաստանի պաշտպանության և անվտանգության քաղաքականության կենտրոնական նպատակները: Հենց այն պատճառով, որ ժամանակակից պատերազմների և հակամարտությունների փոփոխվող բնույթն ու առանձնահատկությունները մեծացնում են երկուսի արժեքը, աճել է նաև Հայաստանի նկատմամբ այդ բնագավառներում ԵՄ ինստիտուցիոնալ և երկկողմ աջակցության կարևորությունն ու դրա հետ կապված ակնկալիքները:

Իրոք, ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների փոփոխվող բնույթն ազդել է ամբողջ աշխարհում ռազմական և անվտանգային քաղաքականությունների վրա՝ ուղղակի և կոնկրետ հետևանքներ ունենալով Հայաստանի ազգային պաշտպանության ռազմավարության համար: Արդեն 2020-2023թթ.՝ Ղարաբաղյան երկրորդ պատերազմի և Հայաստանի ինքնիշխան տարածք ադրբեջանական հետագա ներխուժումների ընթացքում, ի հայտ եկած մարտական գործողությունների նոր ձևերն ու մեթոդները առավել հետևողական և համապարփակ կերպով տեսանելի դարձան Ուկրաինայում պատերազմի՝ Երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպայի ամենախոշոր զինված հակամարտության գրեթե հինգ տարիների ընթացքում: Հիմնարար փոփոխությունը պարզ է, սակայն դրա օպերատիվ հետևանքները խորքային են. ժամանակակից ՍՌՏ-ի աճող հզորությունն ու ճշգրտությունը՝ համակցված գրեթե իրական ժամանակում իրականացվող ՀԴՏ-ի, թիրախների հայտնաբերման և հետախուզության կարողությունների հետ, նշանակում են, որ ավանդական պատերազմի մառախուղը օպերատիվ և մարտավարական մակարդակներում էապես ցրվել է: Սա հիմնովին փոխում է ամրացված դիրքերի դեմ հարձակողական գործողությունների հաշվարկը և, ավելի լայն իմաստով, տեղաշարժի ու զորաշարժի տրամաբանությունը:[15]

[15] “The Changing Nature of Modern Wars and Conflicts: Lessons and Implications for Armenia,” Caucasus Institute Policy Brief, September 2025.

Հարձակվող զորքերի մարտակարգերը, նույնիսկ կենտրոնացման և հակառակորդին մոտենալու ժամանակ, հայտնաբերվում են օդային հետախուզության միջոցով և գրեթե իրական ժամանակում խոցվում փողային ու հրթիռային հրետանու, կառավարվող հրթիռների կամ ԱԹՀ-ների միջոցով՝ սկսած առաջին դեմքից պատկերով (FPV) և կամիկաձե անօդաչու սարքերից մինչև կառավարվող զինամթերք արձակող խոշոր կրիչ-անօդաչուները: Հրթիռային և հրետանային կրակային աջակցության նշանակությունը հասել է աննախադեպ մակարդակի: Այս միջավայրում մարտական ստորաբաժանումների ապակենտրոնացումն ու քողարկումը դառնում են գոյաբանական նշանակության օպերատիվ պահանջներ, այլ ոչ թե մարտավարական նախապատվություններ: Դաշտային ամրաշինական կառույցները, ստորգետնյա ենթակառուցվածքները, քողարկումն ու քողածածկումը, ինչպես նաև մատակարարման գծերի պաշտպանությունը ձեռք են բերում կրիտիկական օպերատիվ կարևորություն: Այս դասերը կիրառելի են ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանողական գործողությունների համար, սակայն անհամաչափորեն բարենպաստում են պաշտպանվող կողմին այն դեպքում, երբ վերջինս ներդրումներ է կատարել ամրացված դիրքերում, հեռահար հարվածային կարողություններում և էֆեկտորներում, շերտավորված ՀՕՊ-ում ու ինտեգրված կրակի կառավարման համակարգերում:[16]

Երկու կոնկրետ հակամարտությունների փորձը Հայաստանի ռազմավարական պլանավորման համար ծառայում է որպես անմիջական առնչություն ունեցող փորձառական կողմնորոշիչ: Ուկրաինայի պատերազմը աննախադեպ մասշտաբով և երկարատև ժամանակահատվածում ցույց է տալիս, թե ինչպես է գործնականում աշխատում կոնվենցիոնալ (սովորական՝ ոչ միջուկային) զսպումը և ինչպիսի ռեսուրսային ու ինստիտուցիոնալ պահանջներ են առաջանում, երբ փոքր պետությունը պաշտպանվում է զգալիորեն ավելի հզոր հակառակորդից: Միևնույն ժամանակ, Իրանի դեմ 2025-2026թթ. ԱՄՆ-ի և

[16]Sergey Minasyan, “Military and Strategic Features of the War in Ukraine,” Political Dynamics in Ukraine: PONARS Eurasia Policy Perspectives, Washington, D.C., May 2025.

Իսրայելի ռազմարշավները ցույց են տալիս, որ նույնիսկ որակապես և քանակապես գերազանց հակառակորդների առերեսվող երկիրը, որը գործում է խիստ պատժամիջոցների և այլ սահմանափակումների պայմաններում և ունի կոնվենցիոնալ ռազմական արդիականացման սահմանափակ կարողություն, կարող է լուրջ ռազմավարական գին պարտադրել հակառակորդին: Իրանին դա հաջողվեց բալիստիկ և թևավոր հրթիռներով, ինչպես նաև մեկանգամյա անօդաչու հարթակներով հակառակորդի ենթակառուցվածքները, էներգետիկ համակարգերը և ղեկավարման ու կառավարման հանգույցները թիրախավորելու միջոցով: Այդ ռազմարշավները ներառում էին նաև համաժամանակյա ու խնամքով նախապատրաստված համատեղ օդատիեզերական գործողություններ, տեղեկատվական-իմացական արշավներ և ռազմավարական հետախուզական գործողություններ: Միասին վերցված՝ այս փորձառությունները ցուցադրում են ճշգրիտ հարվածի ունակ, ծախսարդյունավետ հարվածային համակարգերի ու էֆեկտորների վրա հիմնված և հակառակորդի զգայուն ենթակառուցվածքների դեմ ուղղված անհամաչափ զսպման ներուժը՝ որպես ռազմավարական հավասարությունից զուրկ փոքր պետությունների ռազմաստրատեգիական կոնցեպցիայի կարևորագույն բաղադրիչ:

Միևնույն ժամանակ, ժամանակակից զինված հակամարտությունների փորձն ընդգծում է առաջադեմ տեխնոլոգիական կարողությունների, այդ թվում՝ արհեստական բանականությամբ հագեցած մարտական ծրագրակազմի ինտեգրման հրամայականը արհեստական բանականությամբ կառավարվող մարտական գործողությունների վարման միասնական համակարգերում: Այս համակարգերը հնարավորություն են տալիս անխափան ինտեգրել և համակարգված կիրառել ճշգրիտ կառավարվող և չկառավարվող սպառազինությունը՝ էապես բարձրացնելով մարտական արդյունավետությունը: Ըստ առկա օպերատիվ գնահատականների՝ ռազմական գործողությունների վարման նման ինտեգրված համակարգերին բաժին է ընկել թիրախների հաջող խոցումների մինչև 80%ը: [17]

[17] Kateryna Bondar and Matt Mande, “Defining Autonomy: Why Software, Not Drones, Will Decide the Next War,” CSIS Briefs, June 2026. Available at:

Առանցքային համակարգային դասը

Անօդաչու սարքերը նշանակալի դեր են խաղում որպես հետախուզության և հարվածային միջոցներ, սակայն գլխավորապես արդյունավետ են դինամիկ, ցանցակապ բազմատիրույթ պատերազմավարման ավելի լայն համակարգի էական տարր լինելու դեպքում: Հենց համակարգային մոտեցումն է՝ տարբեր տարրերի ճկունությունն ու համակցումը, որ բնորոշում է նոր սերնդի պատերազմը, այլ ոչ թե անօդաչու սարքերի զանգվածային կիրառումն ինքնին: Հայաստանի համար դասը ոչ թե «ավելի շատ անօդաչու սարքեր ստեղծելն» է, այլ «ինտեգրված բազմատիրույթ զսպման համակարգ կառուցելը», որտեղ անօդաչու սարքերը այդ համակարգի հանգուցային մի քանի տարրերից մեկն են: Մյուս տարրեր են հեռահար հարվածային կարողությունները, ճշգրիտ խոցման հրետանին, շերտավորված ՀՕՊ-ը, տարածքային պաշտպանությունը, պաշտպանված ղեկավարման և կառավարման ենթակառուցվածքը, ինքնավար պատերազմավարման և արհեստական բանականությամբ ղեկավարվող համակարգերը, ինչպես նաև հիբրիդային սպառնալիքներին համապարփակ դիմակայունությունը:

Այս փուլում դժվար է գնահատել, թե որքանով է Հայաստանի զինված ուժերի ղեկավարությունը լիարժեք ընկալում ժամանակակից պատերազմների և պատերազմի վարման մեթոդների գնալով ավելի բարդացող բնույթը: Այնուամենայնիվ, պաշտոնական տեղեկատվության վերլուծությունը, մայիսի 28-ի շքերթում Զինված ուժերի՝ զորաշարժային և կրակային (հրթիռահրետանային) աջակցության կարողությունների ցուցադրված աճը՝ մի կողմից, և ամրացված պաշտպանողական կառույցների շարունակվող կառուցումը՝ մյուս կողմից, վկայում են այս ուղղությամբ որոշակի դրական շարժընթացի մասին:

5.2. Հայաստանի ապագա կոնվենցիոնալ զսպման ճարտարապետություն. «3D» հայեցակարգը

Հաշվի առնելով տարածաշրջանային այս հանգամանքներն ու սահմանափակումները՝ Հայաստանը պետք է կոնվենցիոնալ զսպման ռազմավարությունն ընդունի որպես իր երկարաժամկետ պաշտպանական և անվտանգային ռազմաստրատեգիական կոնցեպցիայի հանգուցային տարր: Այս հայեցակարգը, որի մտավոր հիմքերը գլխավորապես

արևմտյան են և հատկապես հենվում են տասնամյակների ամերիկյան, բրիտանական և ֆրանսիական ռազմավարական մտքի վրա, նաև իրական հեռանկարներ է ստեղծում բազմակողմ և երկկողմ ձևաչափերով Հայաստանի արևմտյան գործընկերների, այդ թվում՝ ԵՄ-ի տեխնիկական և խորհրդատվական աջակցության համար:

Հայաստանի անվտանգության և պաշտպանության տեսլականի կարևորագույն բաղադրիչ պետք է լինի բազմամակարդակ ռազմավարական ռազմաքաղաքական զսպումը՝ իր բոլոր ձևաչափերով, ինչը կարելի է բնութագրել որպես «3D» հայեցակարգ՝ «Զսպում, պաշտպանություն և զարգացում»: Զսպմանն առաջնահերթություն տալը և Հայաստանի զինված ուժերի հիմնական առաքելություն հանդիսանալու դրա հստակ ամրագրումը հայեցակարգային փաստաթղթերում Հայաստանի պաշտպանողական ռազմաստրատեգիական կոնցեպցիան կհամահարթեցնեն կառավարության հռչակած «Խաղաղության օրակարգին»՝ աջակցելով կայուն տարածաշրջանային խաղաղության և կայունության հաստատման նպատակին: Զսպման շեշտադրումը կարող է միաժամանակ ծառայել որպես վստահության ամրապնդման միջոց և ռազմավարական ապահովագրության ձև. այն ազդարարում է, որ Հայաստանը չի ձգտում հարևանների դեմ հարձակողական գործողությունների՝ միաժամանակ երաշխավորելով, որ ցանկացած հավանական հակառակորդ, նախքան Հայաստանի դեմ ռազմական գործողություն նախաձեռնելու մասին մտորելը, հաշվի կառնի դրա անընդունելի բարձր գինը:

Հայաստանի պարագայում զսպումը պետք է միաժամանակ գործի մի քանի մակարդակներում: Ռազմավարական մակարդակում այն ենթադրում է ճշգրիտ հարվածային կարողությունների միջոցով հակառակորդի ենթակառուցվածքներին, էներգետիկ համակարգերին և տնտեսական ակտիվներին վնաս պատճառելու արժանահավատ կարողություն՝ պատժի սպառնալիքով զսպման (deterrence-by-punishment) չափումը: Օպերատիվ մակարդակում այն ներառում է պաշտպանության խորություն, սահմանային ամրացված դիրքեր, տարածքային պաշտպանության համակարգեր (ներառյալ Տարածքային պաշտպանության ուժերի ներսում աճող փոխգործունակությունը և մարտունակ ու դիմակայուն պահեստազոր պատրաստելու կարողությունը), ինչպես նաև

հակատանկային և հակադրոնային կարողություններ, որոնք միասին Հայաստանի դեմ հարձակողական ռազմական գործողությունները անընդունելի թանկ են դարձնում անձնակազմի և տեխնիկայի առումով՝ բացասման սպառնալիքով զսպման (deterrence-by-denial) չափումը: Տեղեկատվական-իմացական մակարդակում այն ներառում է հիբրիդային սպառնալիքների, ապատեղեկատվական արշավների, հոգեբանական գործողությունների և հասարակական պառակտումները շահագործելու փորձերի նկատմամբ դիմակայունություն՝ դիմակայունությամբ զսպման (deterrence-by-resilience) չափումը, որը անվտանգության ասպարեզում ժամանակակից մրցակցության մեջ գնալով ավելի կենտրոնական նշանակություն է ստանում:

Բնականաբար, կոնվենցիոնալ զսպման արդյունավետ իրագործումը պահանջում է բոլոր մակարդակների սերտ փոխգործունակություն և համադասում՝ միաժամանակ ընդունելով ռազմական և քաղաքական ղեկավարության կենտրոնական դերը հիպոթետիկ հակամարտության տարբեր փուլերում զսպումն իրականացնելու գործում:

Աղյուսակ 4. Հայաստանի կոնվենցիոնալ զսպման ճարտարապետությունը. կարողությունների գնահատում

Զսպման մակարդակ	Պահանջվող կարողություններ	Ներկա կարգավիճակ	Առաջնահերթություն
Ռազմավարական՝ պատժում (ենթակառուցվածքների բացասում)	Ցածրարժեք ճշգրիտ դրոնային/հեռահար հարվածային հարթակներ և էֆեկտորներ՝ թիրախավորելու համար հակառակորդի էներգետիկ հանգույցները, լոգիստիկան, ղեկավարման ու կառավարման օբյեկտները, զգայուն ենթակառուցվածքները	Սահմանափակ՝ նպատակային գնումների առանձին ծրագիր դեռևս չկա	Բարձր
Օպերատիվ՝ - բացասում (ուժերի պաշտպանություն)	Հրետանի և ՀԿՌՀ, ՀՏԿՀՀ, շերտավորված ՀՕՊ, կարճ հեռահարության անօդաչու սարքերի և հակադրոնային համակարգեր	Առաջադեմ՝ հիմնական գնումները շարունակվում են, ինտեգրումը դեռևս ամբողջական չէ	Բարձր

Զսպման մակարդակ	Պահանջվող կարողություններ	Ներկա կարգավիճակ	Առաջնահերթություն
Տարածքային՝ վնասի պատճառում	Տարածքային պաշտպանության ուժեր, ակտիվ պահեստազոր, սահմանային ամրաշինություն, ստորգետնյա ենթակառուցվածք, քաղաքացիական պաշտպանություն	Զարգացող՝ օրենսդրական և հայեցակարգային բացերը պահպանվում են, ամրաշինությունը մասամբ սկսվել է	Բարձր
Հիբրիդային/ իմացական՝ դիմակայունություն	ՕՏՆՄ-ի հակազդում, կիբեռանվտանգություն, ռազմավարական հաղորդակցություն, հետախուզական ծառայությունների մասնագիտական զարգացում, ժողովրդավարական դիմակայունություն	Կառուցվում է՝ ՀԵՄԳԱ-ն թիրախում է առանցքային տարրերը, ԱԱԾ/ԱՀԾ բարեփոխումներն ընթացքի մեջ են, ԱԽ կարողությունների հզորացումը շարունակվում է	Միջինից մինչև բարձր

5.3. ԵՄ-ի փորձը Ուկրաինայում և Արևելյան գործընկերների հետ. ինչն է կիրառելի Հայաստանի համար և ինչու է դա կարևոր

Եվրոպական Միության՝ Ուկրաինայի զսպման կարողություններին և դիմակայունությանը աջակցելու փորձը՝ ԵՄ պատմության ընթացքում անվտանգության գործիքների կիրառման ամենաինտենսիվ դեպքը, ստեղծել է գործնական գիտելիքի, ինստիտուցիոնալ մեխանիզմների և փորձարկված մոդելների ամբողջություն, որոնք կիրառելի են Հայաստանի պայմաններում: Մասշտաբների միջև առկա է ահռելի տարբերություն (6.4 մլրդ եվրո Ուկրաինային ԽԵՀ-ի աջակցությունը Հայաստանի համար 30 մլն եվրոյի դիմաց), սակայն հիմքում ընկած բազմաթիվ կառուցակարգերը, դասերն ու շրջանակները փոխանցելի են: Հատկապես ուշագրավ են Արևմուտքի նյութական և խորհրդատվական դերը, որը հնարավորություն է տվել Ուկրաինային ավելի քան չորս տարի տևող լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում իրականացնել հեռահար անօդաչու սարքերի և հրթիռային հարվածներ, հատուկ գործողություններ ընդդեմ Ռուսաստանի զգայուն ռազմավարական ենթակառուցվածքների, ինչպես նաև այդ կարողությունների ցուցադրած մարտական ազդեցությունները: Թեև ուկրաինական այս օպերացիաները ինքնին զսպման գործողություններ չեն, հավանական է, որ եթե ռազմական գործողություններն ի վերջո կայունանան կամ սառեցվեն, դրանք կարող են հիմք դառնալ Ուկրաինայի սեփական ռազմավարական զսպման և ռազմական-անվտանգային դիմակայունության ճարտարապետության

համար՝ նախադեպ, որն արժանի է Երևանի կողմից մանրակրկիտ ուշադրության:[18]

Բնականաբար, Հայաստանի ռազմական և անվտանգային հարաբերություններում ԵՄ-ի հետ նման էական ռազմավարական տեղաշարժը ներկայիս փուլում կարող է բախվել զգալի աշխարհաքաղաքական և քաղաքական սահմանափակումների ու ռիսկերի՝ հաշվի առնելով Ուկրաինայում շարունակվող հակամարտությունը և ԵՄ-ի (ավելի լայն առճակատման շրջանակում Մոսկվայի գլխավոր աշխարհաքաղաքական հակառակորդի) հետ հետխորհրդային պետությունների հարաբերությունների նկատմամբ Ռուսաստանի առանձնահատուկ զգայունությունը: Այս համատեքստում չպետք է անտեսել նաև հարևան Ադրբեջանի և Թուրքիայի զգուշավոր վերաբերմունքը:

Այնուամենայնիվ, **հաշվի առնելով, որ Հայաստանի զսպման և դիմակայունության ներուժի զարգացումը կրելու է պաշտպանական բնույթ, չի սպառնալու երրորդ երկրների անվտանգությանը և հետապնդելու է Հայաստանի անվտանգության ամրապնդման և զուգահեռաբար՝ տարածաշրջանային կայունությանը նպաստելու նպատակ, եվրոպական ինստիտուտների և երկկողմ գործընկերների ներգրավվածությունն ու աջակցությունն այս հարցում, բարենպաստ պայմանների դեպքում, կարող է դառնալ իրական հնարավորություն:** Սա հատկապես հավանական է՝ հաշվի առնելով հենց ԵՄ-ի արագ զարգացումը՝ ԱՄՆ արտաքին քաղաքականության հեղհեղուկության և ավելի լայն ռազմավարական միտումների ֆոնին, որոնք ԵՄ-ին մղում են ավելի լայն եվրոպական հարևանության տարածքում գործընկեր երկրներին ռազմական օգնություն տրամադրելու և ժամանակակից զինատեսակներ մատակարարելու գործում մրցակցելու այլ արտաքին դերակատարների հետ՝ խորացող ռազմավարական մրցապայքարի պայմաններում: [19]

[18]Council of the EU, “EU Military Support for Ukraine.” Available at: https://www.consilium.europa.eu/en/policies/eu-military-support-ukraine

[19]Pieter D. Wezeman, Military Assistance Provided by the EU and Other External Actors to the EU’s Eastern Neighbourhood, 2010–25, SIPRI Strategic Mercator, 2026.

Հայաստանի ավելի դիմակայուն անվտանգության և պաշտպանության ռազմաստրատեգիական կոնցեպցիան, հատկապես եվրոպական գործընկերների հետ կայուն ներգրավվածության միջոցով ամրապնդվելու դեպքում, կարող է նաև ծառայել Հարավային Կովկասում և ավելի լայն Կովկաս-Կասպյան տարածաշրջանում եվրոպական աշխարհատնտեսական և հաղորդակցային շահերին: Ավելի մեծ անվտանգությունը, կոնվենցիոնալ զսպումը և ինստիտուցիոնալ դիմակայունությունը Հայաստանը կդարձնեն ենթակառուցվածքների զարգացման և ներդրումների համար ավելի կանխատեսելի միջավայր՝ միաժամանակ նվազեցնելով աշխարհաքաղաքական խաթարումների նկատմամբ տարածաշրջանային նորահայտ հաղորդակցային նախագծերի խոցելիությունը: Սա հատկապես արդիական է դառնում, քանի որ ԵՄ-ն հետամուտ է բազմազանել տրանսպորտային, հաղորդակցային և տնտեսական կապերը դեպի Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա:

Հետևաբար, Հայաստանի «Խաղաղության խաչմերուկը», Հյուսիս-Հարավ ենթակառուցվածքը, ինչպես նաև Տրանս-Կասպյան/Միջին միջանցքում և ԱՄՆ հովանու ներքո TRIPP շրջանակում Հայաստանի հնարավոր դերակատարումը պետք է դիտարկել ոչ միայն որպես ազգային կամ տարածաշրջանային նախաձեռնություններ, այլև որպես ավելի լայն եվրոպական ջանքերի բաղադրիչներ՝ տարածաշրջանային անվտանգությունը, դիմակայունությունը և իր արտաքին հաղորդակցային ցանցերի այլընտրանքայնությունը բարձրացնելու ուղղությամբ:

Ռազմավարական այժմեականությունը տարածվում է տրանսպորտի շրջանակներից դուրս: Հայաստանի տարածքով ավելի հուսալի արևելք-արևմուտք և հյուսիս-հարավ հաղորդակցությունները կարող են նպաստել առևտրի և շարժունակության զարգացմանը, բարելավել կրիտիկական նշանակության օգտակար հանածոներին (այդ թվում՝ տեղական արտադրության ռեսուրսներին) հասանելիությունը և նոր հնարավորություններ ստեղծել էներգետիկ ու թվային ավելի մեծ փոխկապակցվածության համար:

Այս տրամաբանությունն ավելի ու ավելի հստակ արտացոլվում է նաև ԵՄ քաղաքականության մեջ: ԵՄ-Հայաստան հաղորդակցային գործընկերությունը, որը հայտարարվեց 2026թ. մայիսին կայացած ԵՄ-Հայաստան առաջին գագաթնաժողովում, որպես առաջնահերթ

ուղղություններ հստակորեն սահմանում է տրանսպորտային, էներգետիկ և թվային փոխկապակցվածությունը, մինչդեռ ԵՄ-ի միջտարածաշրջանային հաղորդակցային օրակարգը հետամտում է Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի միջև կապերն ամրապնդելուն:

Այս տեսանկյունից, **Հայաստանի շարունակվող ռազմական և անվտանգային կերպափոխումը ԵՄ-ի համար կարող է ձեռք բերել աշխարհատնտեսական և հաղորդակցային նշանակություն, որը տարածվում է նրա անմիջական հարևանության սահմաններից շատ անդին:** Հարկադրանքին զսպելու, կրիտիկական նշանակության ենթակառուցվածքները պաշտպանելու և ցանկացած արտաքին ճնշման պայմաններում հաղորդակցությունների կենսունակությունը պահպանելու ավելի մեծ ունակություն ձեռք բերելով՝ Հայաստանը կարող է նպաստել Հարավային Կովկասով դեպի Կենտրոնական Ասիա տարածվող եվրոպական հաղորդակցային ավելի լայն ճարտարապետության դիմակայունությանը: Այս ֆոնին՝ ԵՄ-Ուկրաինա անվտանգային համագործակցության մոդելի մի շարք կոնկրետ տարրեր արժանի են Հայաստանի համատեքստում ավելի մանրամասն ուսումնասիրության:

5.3.1. Ռազմական աջակցության առաքելությունները և ԵՄՕԱ/ԵՄՌՕԱ մոդելը

Ուկրաինային աջակցող ԵՄ ռազմական օժանդակության առաքելությունը (ԵՄՌՕԱ [EUMAM] Ուկրաինա), որը ստեղծվել է 2022թ. նոյեմբերին և հետագայում ընդլայնվել, մինչև 2026թ. սկիզբը ԵՄ անդամ պետություններում պատրաստել էր ավելի քան 86,800 ուկրաինացի զինծառայող: Թեև ԵՄՌՕԱ-ը ԸԱՊՔ-ի ռազմական առաքելություն է և տարբերվում է Հայաստանում տեղակայված քաղաքացիական ՀԵՄԱ առաքելությունից, դրա ներկայացրած մոդելն ուղղակիորեն կիրառելի է Հայաստանի համար՝ վերջինիս զինված ուժերի կողմից 2024-2035թթ. Բանակի կերպափոխման հայեցակարգով նախանշված դոկտրինային և ինստիտուցիոնալ կերպափոխման իրականացմանը համընթաց: Վերակազմավորված ՀԵՄԱ-ի մանդատի շրջանակում հատուկ նպատակով ստեղծված պատրաստության աջակցության բաղադրիչը կամ առանձին ռազմական խորհրդատվական բաղադրիչը կարող է Հայաստանի համար հասանելի դարձնել ԵՄ անդամ պետությունների ռազմական խորագիտակությունը անօդաչու համակարգերի ինտեգրման,

համազորային գործողությունների, կրակային (հրթիռահրետանային) աջակցության, տարածքային պաշտպանության կառուցվածքի և հակադրոնային մարտավարության ուղղություններով: Սրանք կարողությունների ոլորտներ են, որոնցում Հայաստանի կերպափոխումն առավել անհետաձգելի է:

5.3.2. Բալթյան և սկանդինավյան երկրների՝ Խորքային զսպման և Համապարփակ պաշտպանության մոդելը

Բալթյան պետությունները և սկանդինավյան երկրները՝ Ֆինլանդիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան և Շվեդիան, տասնամյակների ընթացքում զարգացրել են ազգային զսպման կատարելագործված համակարգեր՝ հիմնված տարածքային պաշտպանության, պատրաստված պահեստազորայինների, քաղաքացիական դիմակայունության և հասարակական համախմբվածության վրա, որոնք հատուկ նախագծված են առավելագույնի հասցնելու սահմանափակ ազգային ռազմական կարողությունների զսպիչ և պաշտպանական օգտակարությունն ընդդեմ զգալիորեն ավելի հզոր հակառակորդի: Էստոնիայի և Լատվիայի տոտալ պաշտպանության հայեցակարգերը, Ֆինլանդիայի զորակոչահեն տարածքային պաշտպանության համակարգը և Շվեդիայի քաղաքացիական պատրաստության ճարտարապետությունը ներկայացնում են փորձարկված մոդելներ, որոնք անմիջականորեն արդիական են Հայաստանի իրավիճակի համար: ԵՄ գործիքակազմը, այդ թվում՝ ՀԵՄԳԱ-ն, որը կարող է համապատասխան նախարարություններին տրամադրել խորհրդատվական աջակցություն, ինչպես նաև բուն ԵՄ-ի դիմակայունության նորահայտ շրջանակները, կարող են նպաստել այս երկրներից Հայաստան գիտելիքի համակարգված փոխանցմանը: Հայաստանի կողմից սեփական Համապարփակ պաշտպանության և անվտանգության հայեցակարգի կոնցեպտուալ և դոկտրինային հիմքերի զարգացումը լիովին տեղավորվում է այս ռազմավարական տրամաբանության մեջ: [20]

[20]International Centre for Defence and Security (ICDS), “Estonia’s Total Defence Concept,” Tallinn, 2024; Swedish Civil Contingencies Agency (MSB), “Civil Preparedness and Total Defence,” 2025.

5.3.3. Էներգետիկ անվտանգություն և կրիտիկական կարևորության ենթակառուցվածքների դիմակայունություն

Էներգետիկ ենթակառուցվածքների դեմ Ռուսաստանի համակարգված հարվածներին առերեսվելու Ուկրաինայի փորձը, ինչպես նաև պաշտոնական Կիևի էներգետիկ համակարգի դիմակայունության ուղղությամբ ԵՄ-ի լայնածավալ աջակցությունը՝ ներառյալ արագ վերականգնման վարքականոնները, էներգետիկայի վթարային աջակցությունը և տարատեղված գեներացման հզորությունները, Հայաստանի համար ուղղակիորեն կիրառելի մոդել են ներկայացնում: Հայաստանը բախվում է համանման խոցելիությունների, որոնք սկիզբ են առնում դեռևս 1990-ականների Ղարաբաղյան առաջին պատերազմից. երկրի էներգետիկ համակարգը, թեև ավելի բազմազանված, քան մինչև 2020թ., շարունակում է ունենալ կրիտիկական կենտրոնացման հանգույցներ: Դիմակայունության և աճի ծրագիրը (270 մլն եվրո, 2024-2027թթ.) արդեն ներառում է էներգետիկ բազմազանումը որպես առանցքային բաղադրիչ: Ուկրաինային ԵՄ աջակցության օրինակով էներգետիկ ենթակառուցվածքների ամրապնդման, տարատեղված գեներացման և վերականգնման կարողությունների զարգացման բացահայտ ներառումը ԵՄ-Հայաստան անվտանգային համագործակցության շրջանակում այն տնտեսական զարգացման ծրագրից կվերափոխեր զսպման համար նշանակություն ունեցող կարողության:

5.3.4. Հիբրիդային սպառնալիքներին դիմակայունություն. ՀԵՄԳԱ – Մոլդովա - Բալթյան մոդելը

Մոլդովայի, բալթյան պետությունների և Ուկրաինայի հետ ներգրավվածության միջոցով ԵՄ-ն զարգացրել է հիբրիդային սպառնալիքներին դիմակայունության աստիճանաբար կատարելագործվող ինստիտուցիոնալ շրջանակներ: ԵՄ-ի Հիբրիդային միաձուլման բաժանմունքը (Hybrid Fusion Cell), Արևելյան ռազմավարական հաղորդակցության (Արևելք ՌազմՀաղ - East StratCom) օպերատիվ խումբը (Task Force), ԵՄ կիբեռանվտանգության գործիքները (ENISA, Կիբեռհամերաշխության ակտը) և ապատեղեկատվությանը (OSՆՄ) համակարգված արձագանքման նորահայտ շրջանակն իրենցից

ներկայացնում են ինստիտուցիոնալ կարողություններ, որոնք ՀԵՄԳԱ-ի միջոցով կարող են տարածվել Հայաստանի վրա: Մոլդովայում ԵՄ գործընկերության առաքելության (EUPM Moldova) ՀԵՄԳԱ-ին նախորդած խորհրդատվական առաքելության փորձը ծառայում է որպես կառուցվածքային ամենաուղղակի համեմատիչ. փոքր, աշխարհագրորեն սահմանափակված գործընկեր, որը զգալիորեն ենթարկվում է օտարերկրյա հիբրիդային գործողությունների ազդեցությանը, և որտեղ ԵՄ խորհրդատվական աջակցությունը ձևավորել է ՕՏՆՄ-ին հակազդման, կիբեռհանցագործություններին արձագանքման և ժողովրդավարական դիմակայունության ուղղություններով չափելի ինստիտուցիոնալ կարողություն:

5.3.5. Խաղաղության եվրոպական հիմնադրամը՝ որպես փոխանցելի գործիք

Ուկրաինայի փորձի միջոցով Խաղաղության եվրոպական հիմնադրամի (ԽԵՀ) զարգացումը՝ որը գործընկեր զինուժին ոչ մահաբեր աջակցություն տրամադրելու գործիքից, հաջորդաբար ընդլայնվեց և ներառեց սկզբում՝ մահաբեր նշանակության ՍՈՏ, խոշոր զինատեսակների հարթակներ և, ի վերջո՝ զինամթերքի արտադրության աջակցություն, ցույց է տալիս այս գործիքի կառուցվածքային ճկունությունը: Հայաստանի համար այս զարգացումը ներկայացնում է և՛ կողմնորոշման կետ, և՛ հնարավոր ուղեգիծ: Հայաստանի համար ներկայիս 30 մլն եվրոյի ԽԵՀ հատկացումը ոչ մահաբեր բնույթի է և կենտրոնացած է նյութատեխնիկական ապահովման ու անձնակազմի անվտանգության ապահովման վրա:

ԵՄ չափորոշիչներով ուժերի հետ Հայաստանի փոխգործունակության բարելավմանը և խաղաղության գործընթացի ամրապնդմանը զուգընթաց՝ ԽԵՀ-ի աջակցության (կամ առնվազն առանձին անդամ պետությունների երկկողմ աջակցության) ընդլայնումն ու դրա ուղղումը դեպի մարտական ապահովման մահաբեր միջոցներ, ներառյալ կատարելագործված կապի միջոցներ, ճշգրիտ կրակի կառավարման համակարգեր, հակադրոնային ռադիոէլեկտրոնային պայքարի (ՌԷՊ) և գիշերային տեսանելիության սարքավորումներ, կպահանջի ոչ թե ինստիտուցիոնալ նորարարություն, այլ միայն՝ առկա մեխանիզմները կիրառելու քաղաքական կամք:

5.4. ԵՄ-ի և արևմտյան գործընկերների դերը Հայաստանի զսպման և դիմակայունության կարողությունների ձևավորման գործում

Հայաստանի եվրոպական ինտեգրման օրակարգի և երկրի զսպման կարողությունների միջև կապը կարևոր է, սակայն հաճախ թերագնահատված: **Հենվելով Ուկրաինայի և Արևելյան Եվրոպայի գործընկերների հետ խորացված փորձի վրա՝ ԵՄ-ն և նրա անդամ պետությունները բացառիկ հնարավորություն ունեն աջակցելու Հայաստանին Աղյուսակ 4-ում ներկայացված զսպման ճարտարապետության բոլոր չորս շերտերով:**

Ռազմավարական՝ ենթակառուցվածքների բացասման շերտում եվրոպական երկկողմ ռազմարդյունաբերական հարաբերությունները, հատկապես Ֆրանսիայի հետ, ապահովում են աջակցության առավել անմիջական միջոց. բանակցությունների առարկա հանդիսացող ՀՕՊ համակարգերը, ինչպես նաև հնարավոր այլ ճշգրիտ հարվածի ունակ հարթակները, ՍՌՏ հենց այն տեսակն են, որոնք կարող են աջակցել և ձևավորել Պատժի սպառնալիքով զսպման արժանահավատ կարողություններ: ԱՄՆ-ը կարող է ապահովել նման մատակարարումների քաղաքական օրինականացման շրջանակը, մինչդեռ ԵՄ-ի ԽԵՀ-ը պոտենցիալ կերպով կարող է ֆինանսավորել ոչ մահաբեր մարտական ապահովման սարքավորումները, որոնք բազմապատկում են այդ համակարգերի արդյունավետությունը:

Օպերատիվ՝ ուժերի պաշտպանության շերտում ֆրանսիական երկկողմ մատակարարումների (ՍԵՋԱՐ, Բաստիոն, GM-200, բազմաշերտ ՀՕՊ համակարգեր), Հնդկաստանից գնումների (Պինակա, Ակաշ, ԿոնկուրսՄ) և ԽԵՀ-ի ոչ մահաբեր աջակցության համակցությունն արդեն հանդիսանում է էական և արագացող ծրագիր: ՀԵՄԳԱ-ն կամ ԵՄ-ի մեկ այլ ձևավորված ռազմական խորհրդատուների խումբ կարող է տրամադրել դոկտրինային և փոխգործունակության հարցերով խորհրդատվական աջակցություն՝ օգնելով հայկական ուժերին ձեռք բերված այդ համակարգերը շահագործել ԵՄ-ին համատեղելի համազորային մարտի դոկտրինի, այլ ոչ թե խորհրդային ժամանակաշրջանի ձևանմուշների համաձայն:

Տարածքային՝ վնասի պատճառման շերտում ԵՄ անդամ սկանդինավյան և բալթյան պետությունները հանդիսանում են

անմիջականորեն առավել արդիական մոդելներ և գործընկերներ: Ֆինլանդիայի տարածքային պաշտպանության համակարգը, Էստոնիայի պաշտպանական լիգայի (Kaitseliit) մոդելը, ինչպես նաև Լատվիայի և Լիտվայի պահեստազորային ուժերի կազմակերպությունները փորձարկվել են Հայաստանի առջև ծառացած միջավայրին համանման իրական սպառնալիքի պայմաններում: ԵՄ-ի աջակցությամբ գիտելիքի փոխանցումը կարող է արագացնել Հայաստանի կողմից սեփական տարածքային պաշտպանության համակարգի զարգացումը՝ շատ ավելի արդյունավետ, քան փորձելով դա անել առանց վկայակոչելու գոյություն ունեցող և փորձարկված այս մոդելները:

Հիբրիդային/իմացական՝ դիմակայունության շերտում ՀԵՄԳԱ-ի առանցքային մանդատը թիրախում է առավել հրատապ կարիքները՝ ՕՏՆՄ-ին հակազդման կարողություն, կիբեռանվտանգություն, ռազմավարական հաղորդակցություն և միջգերատեսչական համակարգում: ԵՄ-ի Արևելք ՌազմՀաղ օպերատիվ խումբը և դրա ինստիտուցիոնալ փորձը անմիջականորեն կիրառելի են Հայաստանի խոցելիությունների համատեքստում: Համապարփակ կիբեռանվտանգության ճարտարապետությունների զարգացման գործում ԵՄ-ի ներգրավվածությունը բալթյան պետությունների և Մոլդովայի հետ ապահովում է փորձարկված շրջանակներ, որոնք կարող են ուղղորդել Հայաստանի սեփական դիմակայունության ջանքերը:

Համակարգային մոտեցման առանցքային դրույթը

Ուկրաինայի և Արևելյան Եվրոպայի գործընկերների հետ ԵՄ-ի փորձառությունից Հայաստանի համար ամենակարևորը ոչ թե որևէ առանձին կարողության կամ գործիքի, այլ համակարգային ներըմբռնման ցուցադրությունն է. զսպումն ու դիմակայունությունը փոխադարձաբար ամրապնդող, այլ ոչ թե միմյանցից անջատ շավիղներ են: Գործող ժողովրդավարական ինստիտուտներ, պաշտպանության ջանքերը հասկացող և դրանց աջակցող իրազեկ հասարակություն, բազմազանված էներգետիկ և տնտեսական ենթակառուցվածքներ, քաղաքացիական հասարակության արդյունավետ մոնիթորինգային մեխանիզմներ և արհեստավարժ պետական ինստիտուտներ ունեցող երկիրը կառուցվածքային առումով ավելի զսպող է, քան համարժեք սարքակազմ, սակայն ավելի թույլ ինստիտուտներ ունեցող երկիրը: ԵՄ-ի համեմատական առավելությունը հենց այս բոլոր չափումներում

միաժամանակյա ներդրում կատարելու կարողության մեջ է, և Հայաստանի եվրոպական ինտեգրման օրակարգը, այն պատշաճ կերպով ըմբռնելիս, ինքնին հանդիսանում է ներդրում զսպման մեջ:

5.5. ԵՄ-ի և արևմտյան գործընկերների աջակցությունը Հայաստանի հետախուզական ծառայությունների բարեփոխմանը

Հայաստանի հետախուզական ծառայությունների բարեփոխումը այն ոլորտներից է, որտեղ ԵՄ-ի և արևմտյան գործընկերների ներգրավվածությունը կարող է առավել նշանակալից հետևանքներ ունենալ, և որտեղ այն մինչ այժմ առավել քիչ համակարգված ձևով է զարգացել: ԱԱԾ-ն և նորաստեղծ ԱՀԾ-ն բախվում են կառուցվածքային առումով համանման մարտահրավերների, նույնիսկ եթե դրանց ինստիտուցիոնալ ելակետերը խիստ տարբեր են: Երկուսն էլ պետք է հրաժարվեն ժառանգված, հնացած ինստիտուցիոնալ սովորույթներից, ձևավորեն իսկապես անկախ վերլուծական մշակույթ, պաշտպանվեն օտարերկրյա հետախուզական ծառայությունների ներթափանցումից և ձևավորեն նոր մասնագիտական ցանցեր: Այս գործողություններից ոչ մեկը աննախադեպ չէ: Արևմտյան հետախուզական համայնքները և ԵՄ գործընկերները վերջին երկու տասնամյակների ընթացքում առաջնորդել են հետխորհրդային համանման պետություններին, այդ թվում՝ բալթյան երկրներին, Վրաստանին, Մոլդովային և Ուկրաինային, գրեթե նույն գործընթացի միջով, և արդյունքում ձևավորված փորձն ու ինստիտուցիոնալ ընտելությունները կարող են ուղղակիորեն կիրառվել Հայաստանի պարագայում:

Հետախուզական համայնքի բարեփոխման հարցում ԵՄ-ի պաշտոնական լծակները կառուցվածքային առումով սահմանափակ են, քանի որ հետախուզական համագործակցությունը չի մտնում ՀԸԳՀ-ի (CEPA) պաշտոնական շրջանակի մեջ և գիտակցաբար մեծապես դուրս է մնում ԸԱՊՔ-ի քաղաքացիական առաքելությունների մանդատներից: Այնուամենայնիվ, գոյություն ունեն մի շարք խողովակներ, որոնք կարող են խորացվել: ՕՏՆՄ-ի և կիբեռհանցագործությունների վերաբերյալ ՀԵՄԳԱ-ի խորհրդատվական մանդատը, հավանաբար, ապահովում է ԱԱԾ-ի և ԱՀԾ-ի հետ ներգրավվածության ինստիտուցիոնալ օրինական անցակետ

հենց այն սպառնալիքների ուղղություններով, որտեղ հայկական ինստիտուցիոնալ կարողության և իրական սպառնալիքների միջավայրի միջև բացն ամենամեծն է: ԵՄ-ի Հիբրիդային միաձուլման բջիջը, որը վերլուծում է անդամ պետություններում և գործընկեր երկրներում հիբրիդային սպառնալիքների արշավները, կարող է Հայաստանին ապահովել վերլուծական արգասիքներին և մեթոդաբանություններին կառուցակարգված հասանելիությամբ՝ ստեղծելով ԱՀԾ-ի և ԱԱԾ-ի համար ինստիտուցիոնալ ուսուցման հնարավորություններ, որոնք այլապես կպահանջեին առանձին ազգային հետախուզական ծառայությունների հետ երկկողմ համաձայնագրեր:

Հայաստանի հետախուզական համայնքի հետ արևմտյան երկկողմ ներգրավվածությունն արդեն սկսվել և ընդլայնվում է: Միացյալ Թագավորության ակտիվ ներգրավվածությունը հիբրիդային սպառնալիքների վերլուծության, պաշտպանության ոլորտի բարեփոխումների խորհրդատվական աջակցության և հետախուզական ծառայությունների մասնագիտական զարգացման ուղղություններում հետախուզական համայնքների համակարգված երկկողմ գործընկերության մոդել է ապահովում: Ֆրանսիայի ռազմական առաքելությունը՝ իր խորհրդատվական և հետախուզական աջակցության մանդատով, ստեղծում է ևս մեկ խողովակ: ԱՄՆ-ի ներգրավվածությունը, թեև ռազմական հարթությունում սահմանափակված է խաղաղության հաստատման գործընթացի նկատմամբ նրբախնդրությամբ, ներառում է նաև հետախուզական խորհրդատվական աջակցություն, որն ավելի քիչ հրապարակայնորեն տեսանելի, սակայն ռազմավարական առումով կարևոր է:

Աջակցության մի շարք կոնկրետ ձևեր առանձնապես արդիական են: ԱՀԾ-ի և ԱԱԾ-ի վերլուծաբանների մասնագիտական պատրաստությունը ժամանակակից հետախուզական մեթոդաբանությունների, այդ թվում՝ բայց աղբյուրներից հետախուզության, վերլուծական հմտությունների և ռազմավարական գնահատման շրջանակների հարցերով, ուղղակիորեն կթիրախի ԱՀԾ-ի նորաստեղծ կարգավիճակով և ԱԱԾ-ի ավանդական վերլուծական մշակույթով պայմանավորված կարողությունների բացերը: Օտարերկրյա սպառնալիքների կոնկրետ կատեգորիաների (ինչպիսիք են ապատեղեկատվական գործողությունները, հիբրիդային

գործողությունները և հետախուզական բաղադրիչ ունեցող կազմակերպված հանցավորության ցանցերը) վերաբերյալ տեղեկատվության համակարգված փոխանակման համաձայնագրերը հայկական ծառայություններին հնարավորություն կտան հասանելիություն ստանալ գործընկերների վերլուծական արգասիքներին՝ միաժամանակ ձևավորելով ավելի խոր համագործակցության համար անհրաժեշտ փոխադարձ վստահություն: Երկու ծառայությունների համար թվային անվտանգության և հակահետախուզության ուղղությամբ տեխնիկական աջակցությունը նույնպես զգայուն, սակայն օպերատիվ առումով կարևորագույն առաջնահերթություն է:

Բալթյան պետությունների փորձն այստեղ ևս անմիջականորեն տեղին է: Էստոնիայի հետախուզական ծառայությունները՝ Ներքին անվտանգության ծառայությունը (KAPO) և Արտաքին հետախուզության ծառայությունը (Välisluureamet), անկախացումից հետո անցել են համադրելի կերպափոխման գործընթացներ՝ խորհրդային ժամանակաշրջանի ինստիտուցիոնալ ժառանգությունը հաղթահարելով արևմտյան խորհրդատվական աջակցության, հատուկ նպատակով ստեղծված մասնագիտական պատրաստության ծրագրերի, ինչպես նաև արևմտյան գործընկերներին կողմնորոշված ինստիտուցիոնալ մշակույթների ու հավատարմության համակարգերի գիտակցված կառուցման համակցության միջոցով: Ձևավորված ինստիտուտներն այժմ Դաշինքի ներսում լայնորեն դիտարկվում են որպես բարձր կարողունակությամբ և հարգված կառույցներ, մասամբ այն պատճառով, որ դրանց կերպափոխումն իրականացվել է համակարգված կերպով և տևական արտաքին աջակցությամբ: Ռումինիան՝ իր հետկոմունիստական հետախուզական ծառայությունների բարեփոխման տպավորիչ փորձով և դրա հիման վրա Արևելյան Եվրոպայում արդյունավետ ռազմական ու արտաքին հետախուզական կարողությունների ձևավորմամբ՝ միաժամանակ պահպանելով գործակալական հետախուզության ավանդական շեշտադրումը և հզոր հակահետախուզական կարողությունը, բոլորն էլ քաղաքացիական վերահսկողության ներքո, նույնպես արժեքավոր օրինակ է Հայաստանի համապատասխան հետախուզական ծառայությունների համար՝ ուսումնասիրելու և օգտագործելու նպատակով:

ԱԱԾ-ն, որն ունի ավելի մեծ մասնագիտական ներուժ և խորքային ինստիտուցիոնալ փորձ, կարիք ունի կառուցվածքային բարեհարմարեցման նոր մարտահրավերներին և աճող ծավալի օպերատիվ տեղեկատվության պայմաններում պահանջվող տեխնիկական ու տեխնոլոգիական կարողություններին: Հայաստանի ԱՀԾ-ն, որը ստեղծվել է զրոյից՝ արևմտյան աջակցությամբ, կառուցվածքային շահեկան դիրքում է այն առումով, որ կարիք չունի բարեփոխելու արդեն գոյություն ունեցող հաստատությունը, սակայն պահանջում է շարունակական աջակցություն՝ ձևավորելու վերլուծական խորություն, մասնագիտական հարմարվողականություն և ինստիտուցիոնալ դիմակայունություն, որոնք բալթյան պետությունների և Ռումինիայի իր պաշտոնակից հաստատությունները զարգացրել են վերջին տասնհինգ տարիների ընթացքում: ՀԵՄԳԱ-ն, երկկողմ գործընկերությունները և ԵՄ հետախուզական համայնքի ոչ պաշտոնական ներգրավվածության մեխանիզմները կարող են ծառայել որպես այս գործընթացի արագացման գործիքներ:

6. Քաղաքականության հանձնարարություններ

Թեև վերոնշյալ առաջարկությունները հիմնված են Հայաստանի ռազմական և անվտանգային կերպափոխման գործընթացում ԵՄ-ի, ինչպես նաև այլ դերակատարների ու ինստիտուտների զարգացող ներգրավվածության իրատեսական գնահատման վրա և ձևավորվել են հայաստանյան ու գործընկեր երկրների փորձագետների ու մասնագետների հետ քննարկումների հիման վրա, դրանց իրականացումը, ամենայն հավանականությամբ, կձևավորվի մի շարք գործնական սահմանափակումներով, որոնք անհրաժեշտ է հստակ ընդունել:

Առաջին՝ ռազմական և անվտանգային տիրույթում եվրոպական աջակցությունը (և առավել ևս՝ այս հարցում ՆԱՏՕ-ի ինստիտուցիոնալ ներգրավվածությունը) պայմանավորված է անդամ պետությունների միջև կոնսենսուսով, որոնցից մի քանիսը շարունակում են ունենալ սպառնալիքների վերաբերյալ տարբեր ընկալումներ և Հարավային Կովկասում, հետխորհրդային տարածքում կամ Սևծովյան ավելի լայն տարածաշրջաններում անվտանգային ավելի խոր ներգրավվածության տարբեր աստիճանի պատրաստակամություն:

Երկրորդ՝ ռեսուրսային սահմանափակումները՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ ինստիտուցիոնալ, ինչպես նաև քաղաքական նկատառումները սահմանափակում են այն մասշտաբն ու տեմպը, որով ԵՄ-ն և եվրոպական առանցքային անդամ պետություններից ոմանք կարող են գործառնականացնել աջակցության նոր գործիքները, հատկապես այն պայմաններում, երբ Միության անվտանգային և պաշտպանության բյուջեի նկատմամբ մրցակցող պահանջներն ուժեղանում են:

Երրորդ՝ ավելի լայն ռազմավարական համատեքստը շարունակում է մնալ փոփոխական. Ուկրաինայի պատերազմում զարգացումները, Ռուսաստան-Արևմուտք առճակատման հնարավոր փոփոխությունները և Մերձավոր Արևելքում զարգացող շարժընթացը կարող են վերաչափաբերել եվրոպակա ռազմավարական առաջնահերթությունները և դրանցում Հարավային Կովկասին տրվող հարաբերական կշիռը:

Վերջապես, առկա ինստիտուցիոնալ սահմանափակումները՝ ներառյալ ԵՄ-ի դեռևս ձևավորվող պաշտպանական քաղաքականության և ռազմական արդյունաբերության զարգացման ճարտարապետությունը, ինչպես նաև կոշտ արտաքին անվտանգային ներգրավվածության առումով նրա մանդատի սահմանները, սահմանափակում են այն շրջանակը, որում համագործակցությունը կարող է իրատեսորեն զարգանալ մոտակա և միջնաժամկետ հեռանկարում: Այս սահմանափակումներից և ոչ մեկը չի խաթարում առաջարկվող միջոցառումների հիմնավորվածությունը կամ նպատակահարմարությունը: Ընդհակառակը, դրանց ընդունումը թույլ կտա առաջարկությունները առավել ամուր հողակցել քաղաքական իրագործելիությանը և իրականացման մարտահրավերների սթափ գնահատումը տարանջատել այն ենթադրությունից, թե եվրոպական ներգրավվածությունն ի բնե սահմանափակ է կամ պայմանավորված է տարածաշրջանում երրորդ երկրների շահերի բավարարման անհրաժեշտությամբ:

Հայաստանում որոշում կայացնողների համար

- **Պաշտոնապես ընդունել «3D» հայեցակարգը.** «Զսպումը, պաշտպանությունը և զարգացումը», որպես երեք հիմնասյուներ, ներառել մշակման փուլում գտնվող Ազգային անվտանգության նոր ռազմավարության մեջ և մշակել իրականացման ենթառազմավարություններ, այդ թվում՝ Զսպման առանձին ռազմավարություն, որը կսահմանի ինչպես Պատժի սպառնալիքով զսպման, այնպես էլ Բացասման սպառնալիքով զսպման չափումները:

- **Փակել իրականացման բացը**. Տարածքային պաշտպանությունը կանոնակարգող օրենսդրությունը, ակտիվ պահեստազորի շրջանակը և կամավորական ստորաբաժանումների ինտեգրումը պահանջում են նոր գումարման խորհրդարանում առաջնահերթ օրենսդրական գործողություններ:

- **Առաջնահերթություն տալ անհամաչափ զսպման կարողություններին.** Գործողության մեջ դնել նպատակային գնումների առանձին ծրագիր՝ ծախսարդյունավետ ճշգրիտ անօդաչու սարքերի և հեռահար հարվածային հարթակների համար, որոնք ունակ են թիրախավորելու հավանական հակառակորդի ենթակառուցվածքային հանգույցները՝ բացահայտորեն հենվելով Ուկրաինայի և Ծոցի տարածաշրջանում վերջին հակամարտությունների փորձի վրա: Արժանահավատ զսպումը չի պահանջում հավասարություն, սակայն պահանջում է անհամաչափ վնաս պատճառելու ցուցադրված կարողություն:

- **Շարունակել ներդրումները սահմանային ամրաշինության մեջ.** Հայաստանի և Ադրբեջանի սահմանի երկայնքով զարգացնել համապարփակ ստորգետնյա ամրաշինություն, քողարկման ենթակառուցվածք և պասիվ պաշտպանության համակարգեր, որոնք իրենց ռազմավարական ազդեցության համեմատ կարող են դառնալ զսպման մեջ ամենածախսարդյունավետ ներդրումներից մեկը: Զարգացնել Տարածքային պաշտպանության ուժերի և Զինված ուժերի այլ զորատեսակների միջև արդյունավետ փոխգործունակություն՝ ամրաշինական ենթակառուցվածքը տևական ակտիվ և պասիվ

պաշտպանողական գործողությունների համար առավել արդյունավետ օգտագործելու նպատակով:

- **Ամրապնդել Անվտանգության խորհուրդը.** Ստեղծել Ղեկավարների կոմիտեի մոդել, մշակել զսպման, ռազմարդյունաբերության զարգացման և տեղեկատվական-իմացականդիմակայունության ենթառազմավարությունների իրագործման փաստաթղթեր և դրանցից յուրաքանչյուրի համար սահմանել կանոնավոր տարեկան վերաբննման շրջափուլեր:

- **Ներդրումներ կատարել մարդկային բաղադրիչում.** Զինվորական մասնագիտական կրթության բարեփոխումը, հալածանքի և ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի վերացումը, ինչպես նաև արհեստավարժ սերժանտական կազմի հետագա զարգացումը նոր ՍՈՏ-ի արդյունավետ օգտագործման նախապայմաններն են և չեն կարող հետաձգվել՝ սարքակազմի ձեռքբերմանը նախապատվություն տալու նպատակով:

- **Արագացնել հետախուզական ծառայությունների բարեփոխումը.** Շարունակել ԱՀԾ-ի կառուցումը և իրականացնել ԱԱԾ-ի վերլուծական մշակույթի ու թվային հակահետախուզական կարողությունների համակարգված արդիականացում՝ դրանք դիտարկելով որպես եվրոպական ինտեգրման օրակարգի առանցքային տարրեր, այլ ոչ թե զուտ տեխնիկական հարցեր:

ԵՄ ինստիտուտների և անդամ պետությունների համար

- **Մշակել ԽԵՀ-ի համակարգված ճանապարհային քարտեզ.** Դուրս գալ ներկայիս 30 մլն եվրոյի սահմանաչափից և անցնել բազմամյա ծրագրի՝ հստակ սահմանված մղոնացույցներով՝ ոչ մահաբեր աջակցությունից աստիճանաբար անցնելով մարտական ապահովման և, հնարավորության դեպքում, մարտական մահաբեր միջոցների կատեգորիաներին, խաղաղության հաստատման գործընթացի և փոխգործունակության զարգացման առաջընթացին համահունչ:

- **ՀՀ ԶՈՒ-ին ապահովել համակարգված հասանելիություն** ԵՄ անդամ պետությունների ռազմական խորագիտակությանը՝

անօդաչու պատերազմավարման, համազորային մարտի, տարածքային պաշտպանության և հակադրոնային գործողությունների ոլորտներում:

- ՀԵՄԱ-ի կամ դրա իրավահաջորդ առաքելության մանդատում **ավելացնել վերապատրաստման աջակցության** բաղադրիչ՝ հենվելով ԵՄՌՕԱ Ուկրաինայի փորձի վրա:

- **ՀԵՄԳԱ-ի հիբրիդային դիմակայունության խորհրդատվական մանդատը հստակորեն կապել** ՀԵՄԱ-ի մոնիթորինգի և փաստաթղթավորման գործառույթի հետ՝ ստեղծելով հարակցված քաղաքացիական անվտանգային ճարտարապետություն, որը ներառում է ինչպես սահմանային մոնիթորինգի, այնպես էլ ներքին դիմակայունության չափումները: Բարեհարմարեցնել ՀԵՄԱ-ի հաջորդ մանդատը՝ խաղաղության հաստատման գործընթացի առաջընթացի դեպքում աշխարհագրական ընդգրկույթն ու անդրսահմանային վստահության ամրապնդման գործառույթներն ընդլայնելու նպատակով:

- **ՀԵՄԳԱ-ն կապել բալթյան/սկանդինավյան դիմակայունության մոդելի հետ.** ՀԵՄԳԱ-ի խորհրդատվական խողովակների և երկկողմ մեխանիզմների միջոցով նպաստել Էստոնիայից, Ֆինլանդիայից, Լատվիայից, Շվեդիայից և Լիտվայից Հայաստանի պետական կառույցներին համակարգված գիտելիքի փոխանցմանը՝ տարածքային պաշտպանության, տոտալ պաշտպանության, քաղաքացիական պատրաստվածության և ՕՏՆՄ-ի նկատմամբ դիմակայունության վերաբերյալ:

- **Էներգետիկ դիմակայունությունը ինտեգրել Դիմակայունության և աճի ծրագրում (ԴԱԾ).** ԴԱԾ-ի շրջանակում հստակորեն ներառել կրիտիկական ենթակառուցվածքների ամրապնդումը, տարաբաշխված գեներացումը և արագ վերականգնման կարողությունը՝ հենվելով ԵՄ-ի կողմից Ուկրաինայի էներգետիկ դիմակայունությանն աջակցության մոդելի վրա:

- **Գործարկել Արևելք ՌազմՀաղ-ի խորհրդատվական աջակցությունը.** ԵՄ-ի Արևելք ՌազմՀաղ օպերատիվ խմբի խորհրդատվական աջակցությունը ՀԵՄԳԱ-ի խողովակներով տարածել Հայաստանի պետական ինստիտուտների և քաղաքացիական

հասարակության վրա՝ ձևավորելով ՕՏՆՄ-ին հակազդման կարողություն և Հայաստանը կապելով նմանատիպ սպառնալիքների առջև կանգնած գործընկեր երկրների ավելի լայն ցանցին:

- **Զարգացնել հետախուզական համայնքի համակարգված աջակցություն.** Ստեղծել ԵՄ-ի և արևմտյան երկկողմ գործընկերների հատուկ շրջանակ՝ Հայաստանի հետախուզական ծառայությունների բարեփոխմանը, մասնավորապես նորաստեղծ ԱՀԾ-ի և ԱԱԾ-ի արդիականացմանը աջակցելու համար՝ խորհրդատվական աջակցության, վերապատրաստման, տեխնիկական օժանդակության և տեղեկատվության համակարգված փոխանակման համաձայնագրերի միջոցով՝ հենվելով բալթյան, սկանդինավյան և արևելաեվրոպական գործընկերների հետ մշակված մոդելների վրա:

ՆԱՏՕ-ի համար

- **Պաշտպանության կարողությունների զարգացման (ՊԿԶ - DCB) նախաձեռնությունը տարածել Հայաստանի վրա:** Նախաձեռնության շրջանակում ընդգրկել պաշտպանության հաստատությունների կառավարումը, թափանցիկությունը, ղեկավարումը, կրթական բարեփոխումները և աստիճանաբար ավելի մեծ կերպով՝ բազմատիրույթ զսպման համար դոկտրինային բարեհարմարեցումը՝ վերլուծաբանների կողմից քննարկված առաջարկից այն վերածելով Հայաստանի գործընկերության փաստաթղթերի կոնկրետ տարրի:

- **Զարգացնել անհամաչափ պատերազմավարման խորհրդատվական մոդուլներ.** Հայաստանի համար ստեղծել հատուկ խորհրդատվական ծրագրեր՝ հենվելով Ուկրաինայում պատերազմի դասերի վրա, այդ թվում՝ անօդաչու համակարգերի ինտեգրման, հակադրոնային գործողությունների, համազորային գործողությունների, կրակային (հրթիռահրետանային) աջակցության, տարածքային պաշտպանության կազմակերպման և հիբրիդային սպառնալիքներին դիմակայունության վերաբերյալ:

- **Խթանել հայ-բալթյան/սկանդինավյան կապերը.** ՆԱՏՕ-ի գործընկերության շրջանակներն օգտագործել՝ Հայաստանը կապելու

տարածքային պաշտպանության, տոտալ պաշտպանության և քաղաքացիական պատրաստվածության այն փորձի հետ, որը ՆԱՏՕ-ի սկանդինավյան և բալթյան անդամ երկրները զարգացրել են տասնամյակների ընթացքում, հատկապես այժմ, երբ Շվեդիան և Ֆինլանդիան միացել են Դաշինքին և ունեն այդ ինստիտուցիոնալ շրջանակներին լիարժեք հասանելիություն:

Երկկողմ գործընկեր երկրների համար

- **Ֆրանսիա.** արտոնագրային արտահանման սահմանված առաստաղը վերածել ներկայում բանակցվող ՀՕՊ և այլ ճշգրիտ համակարգերի փուլային, բազմամյա առաքման ճանապարհային քարտեզի, ինչպես նաև ընդլայնել Սեն Սիրի և Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի գործընկերությունը՝ վերածելով մշտական երկկողմ ռազմակրթական ծրագրի:

- **Հունաստան և Կիպրոս.** եռակողմ վերապատրաստման և կուրսանտների փոխանակման շրջանակն ընդլայնել՝ դարձնելով այն ավելի համակարգված ծրագիր՝ հստակ սահմանված տարեկան մղոնացույցներով, միաժամանակ շարունակելով ԵՄ ինստիտուցիոնալ խողովակներն օգտագործել Հայաստանի շահերի ջատագովության համար:

- **Գերմանիա.** 2025թ. դեկտեմբերին ստորագրված ռազմավարական գործընկերությունն ընդլայնել ինստիտուտների զարգացման և ռազմաքաղաքացիական հարաբերությունների շրջանակից անդին՝ անցնելով ՀԵՄԳԱ-ին հարակից հիբրիդային դիմակայունության և օրենքի գերակայության ծրագրերում ավելի հստակ դերակատարության, որտեղ գերմանական ինստիտուցիոնալ փորձը համեմատաբար ուժեղ է:

- **Միացյալ Թագավորություն.** Ներկայում առանձին նախաձեռնությունների ձևով իրականացվող հիբրիդային սպառնալիքների և հետախուզական ծառայությունների մասնագիտական զարգացման ուղղությամբ ներգրավվածությունը ֆորմալ դարձնել որպես մշտական երկկողմ անվտանգային շրջանակ՝ հիմնվելով 2025թ. ՍՌՏ բեռնարգելքի վերացման վրա:

- **Միացյալ Նահանգներ.** Պահպանել չափաբերված, խաղաղության հաստատման գործընթացի նկատմամբ նրբախնդիր մոտեցումը՝ միաժամանակ խորացնելով պաշտպանական ինստիտուտների բարեփոխումների վերաբերյալ խորհրդատվական հարաբերությունները: Ապահովել կապի, անօդաչու և հակադրոնային համակարգերի շուրջ համագործակցության շրջանակների լրացուցիչ թափանցիկություն՝ ինչպես գործընկերության ինստիտուցիոնալ կայունությունն ամրապնդելու, այնպես էլ դրա բնույթի վերաբերյալ ապատեղեկատվական պատմույթների համար հասանելի տարածքը նվազեցնելու նպատակով:

Եզրակացություն

2020-2023թթ. ի վեր Հայաստանի ռազմական և անվտանգային կերպափոխումը հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում փոքր պետության անվտանգության քաղաքականության ամենաէական վերակողմնորոշումներից մեկն է: Ռազմական և տարածքային կորուստների ցնցումով և աստիճանաբար խորացող եվրոպական գործընկերության դրական ձգողականության մղումներով պայմանավորված՝ վերջին տարիներին Հայաստանը շարժվել է դեպի իրապես բազմազանված անվտանգության ճարտարապետություն: Սա նշանակալի ռազմավարական կերպափոխում է, որի մասշտաբի և արագության համադրելի օրինակներ վերջին ժամանակահատվածում դժվար է գտնել ռազմավարական նմանատիպ խոցելիության պայմաններում գործող և համադրելի չափեր ունեցող պետությունների շրջանում: Ասվածի իրավացիությունը բառացի իմաստով ցույց տվեց 2026թ. մայիսին Հանրապետության օրվա շքերթին ցուցադրված բազմազգ զինանոցը:

Այս կերպափոխման եվրոպական չափումը կարևոր է: Ինչպես փաստարկեց սույն փաստաթղթում, այդ չափումը ընդգրկում է ոչ միայն բուն Եվրոպական Միությունը, այլև ՆԱՏՕ-ն, երկու կազմակերպությունների առանձին անդամ երկրները և ԵՄ-ՆԱՏՕ-ի աստիճանաբար ընդլայնվող փոխկապակցված պաշտպանության պլանավորման տարածաշրջանային տարածությունը, որում այժմ պետք է գործի Հայաստանը: ՀԵՄԱ-ն ինստիտուցիոնալացրել է Հարավային

Կովկասում եվրոպական քաղաքական և անվտանգային ներկայությունը՝ միաժամանակ Հայաստանը դիրքավորելով եվրոպական ավելի լայն քաղաքական տարածության մեջ: ՀԵՄԳԱ-ն ընդլայնում է ԵՄ-ի ներգրավվածությունը և այն տարածում Հայաստանի անվտանգային ճարտարապետության քաղաքացիական և ոչ կինետիկ անվտանգության չափումներում: ԽԵՀ-ը տրամադրել է պաշտպանության ոչ մահաբեր կարողությունների զարգացման ֆինանսական գործիք: Ֆրանսիան դարձել է երկկողմ ձևաչափով խարսխային ռազմական գործընկեր: Հունաստանը, Կիպրոսը, Գերմանիան, Միացյալ Թագավորությունը և Միացյալ Նահանգները ներդրում են աջակցության փոխամրապնդող էկոհամակարգի առանձին տարրեր: ՆԱՏՕ-ի դերը առարկայորեն ընդլայնվում է կրթության, խորհրդատվական աջակցության և պաշտոնապես գործարկվելիք ՊԿՉ ծրագրի հեռանկարի միջոցով:

Հայաստանի ապագա կոնվենցիոնալ զսպման և բազմատիրույթ դիմակայունության ընդլայնված վերլուծությունը ավելացնում է մի չափում, որը շատ հաճախ մնում է եվրոպական ինտեգրման քննարկումներից անջատ: Ուկրաինայի զսպման կարողություններին և դիմակայունությանը աջակցելու ԵՄ փորձառությունը՝ որքան էլ այն մասշտաբով և գլոբալ քաղաքական համատեքստով տարբերվի Հայաստանի համար արդիական պայմաններից, ստեղծել է դյուրին փոխանցելի ինստիտուցիոնալ մոդելներ, գործառնական դասեր և քաղաքականության գործիքներ: ԵՄ անդամ բալթյան և սկանդինավյան պետությունների տարածքային պաշտպանության և տոտալ պաշտպանության հայեցակարգերը անվտանգային անհամաչափ մարտահրավերների դիմադարձող փոքր ժողովրդավարությունների համար ապահովում են փորձարկված շրջանակներ: ՀԵՄԱ/ՀԵՄԳԱ վերապատրաստման աջակցության մոդելը, ԽԵՀ-ի զարգացումը ոչ մահաբեր աջակցությունից համապարփակ ռազմական աջակցություն, Արևելք ՌազմՀաղ-ի՝ ՕՏՆՄ-ին հակազդման փորձառությունը և Ուկրաինայի համար մշակված էներգետիկ դիմակայունության աջակցության շրջանակները կիրառելի են Հայաստանի համար: Դրանց կիրառումը չի պահանջում նոր կազմակերպական նորարարություն, այլ՝ քաղաքական կամք և չափաբերված բարեհարմարեցում:

Հայաստանը գտնվում է այն սահմանագծին, որտեղ

եվրոպական քաղաքական տարածությունը միաժամանակ ավարտվում և սկիզբ է առնում՝ աշխարհագրորեն ծայրամասային, սակայն նորմատիվ և ռազմավարական առումներով կենտրոնական դիրքում: Այդ դիրքի մշտական կամ անցումային դառնալը կախված կլինի առաջիկա մի քանի տարիներին պաշտոնական Երևանում, Բրյուսելում և Վաշինգտոնում ընդունվող որոշումներից, ինչպես նաև այն հանգամանքից, թե արդյոք բոլոր կողմերն այս գործընկերությանը կմոտենան այն հավակնությամբ, հետևողականությամբ և փոխադարձ անկեղծությամբ, որին այն արժանի է: Ի վերջո, ինչպես ցույց տվեց սույն փաստաթուղթը, Հայաստանի եվրոպական ինտեգրման օրակարգը և նրա կողմից արժանահավատ զսպման ու կայուն դիմակայունության հետամտումը ոչ թե զուգահեռ շավիղներ են, այլ մեկ ռազմավարական նախագծի փոխամրապնդող երկու չափումներ:

Հեղինակի մասին

Սերգեյ Մինասյանը Կովկասի ինստիտուտի փոխտնօրենն է, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի (KAS) հրավիրյալ գիտաշխատող: Նա արտաքին և անվտանգային քաղաքականության ճանաչված փորձագետ է՝ ակադեմիական և դիվանագիտական հարուստ փորձառությամբ: Սերգեյ Մինասյանը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում՝ միջազգային հարաբերությունների ոլորտում քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2017-2023թթ. նա զբաղեցրել է Ռումինիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնը, ունի արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարարի դիվանագիտական աստիճան:



Konrad-Adenauer-Foundation
Program “Political Dialogue South Caucasus”

https://www.kas.de/en/web/suedkaukasus/